17 ՅՈՒԼԻՍ 2003 ՇԻՆԳՇԱԲԹԻ 135 (2820)

Azg

armenian daily

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

«Բոստոն Գլոբը» վերանայել է Հայոց ցեղասպանության հանդեպ իր հաղթականությունը

ԲՈՍՏՈՆ, 16 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի ամենահեղինակավոր օրաթերթերից «Բոստոն Գլոբի» լրագրողներն ու աշխատակիցներն այլեւս իրավասու են 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը դատապարտված կերպով բնորոշել որպես «Հայոց ցեղասպանություն»: Ինչպես հաղորդում է Արեւելյան Մասաչուսեթսի հայկական ազգային կոմիտեն (ANC), 20-րդ հարյուրամյակի ամենասարսափելի իրողություններից մեկը բնութագրելու համար գրեթե քառորդ դար խուսափողական տերմիններ եւ որակումներ օգտագործելուց հետո՝ «Բոստոն Գլոբը» որոշել է դադարեցնել Հայոց ցեղասպանության առնչությամբ «ցեղասպանություն» եզրույթը չկիրառելու նախկին քաղաքականությունը: 2003թ. հուլիսի 8-ով թվագրված նամակում օրաթերթի գլխավոր խմբագրի տեղակալ Մայքլ Լարկինը ծանուցել է, որ «Բոստոն Գլոբը» վերանայել է «քաղաքականությունը՝ Հայոց ցեղասպանության հանդեպ»: Կողմերի միջեւ կայացած բանակցությունների ընթացքում ANC-ի ներկայացուցիչներն ու գիտնականները օրաթերթի լրագրողներին եւ խմբագիրներին տրամադրել էին մեծ քանակությամբ տեղեկատվություն եւ դատական փաստագրություն՝ Հայոց ցեղասպանության դեպքերի մասին: Ավելին, «Բոստոն Գլոբի» խմբագիրների հետ ապրիլին տեղի ունեցած հանդիպմանը ներկա է եղել նաեւ Երուսաղեմի Հոլոքոստի եւ ցեղասպանության ինստիտուտի գործադիր տնօրեն դոկտոր Իսրայել Չառնին, որը տրամադրել է հավելյալ արժեքավոր վկայություններ:

ՓԱՐԻԶ

Ժակ Շիրակը դարաբաղյան բանակցությունների վերսկսման օգտին

ՓԱՐԻԶ, 16 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակն այսօր Ելիսեյան դղյակում ընդունել է Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Կայացած զրույցի ընթացքում Ժակ Շիրակը հանդես է եկել Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցությունների վերսկսման եւ հիմնախնդրի «արդարացի լուծման վճռական ջանքերի» օգտին:

ԵԱՀԿ-ի Լեռնային Ղարաբաղի խնդրով Մինսկի խումբը, որի համանախագահներից մեկը Ֆրանսիան է, «կարող է օգտակար դեր խաղալ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բարձր մակարդակով քաղաքական երկխոսության վերականգնման գործում», նշել է Ֆրանսիայի Հանրապետության ղեկավարը:

Ռոբերտ Քոչարյանը «համաձայնել է մինչեւ տարեվերջ կարգավորման գործընթացին նոր ազդակ հաղորդելու անհրաժեշտության հետ», հայտնել է Ֆրանսիայի նախագահի մամուլի քարտուղար Կասրին Կոլոնան:

Ժակ Շիրակը եւ Ռոբերտ Քոչարյանը քննարկել են նաեւ մի շարք տարածաշրջանային հարցեր եւ կարծիքներ փոխանակել Եվրամիության ընդլայնման շուրջ:

ՓԱՐԻԶ, ՅՈՒՆԵՍԿՕ_Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՅԱՆ

Արա Աբրահամյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի դեսպան

ՓԱՐԻԶ, 16 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը երեքշաբթի երեկոյան արժանացել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպանի կոչման: «ՅՈՒՆԵՍԿՕ-ն նշում է Արա Աբրահամյանի առանձնակի ներդրումը մշակույթների եւ կրոնական դավանանքների միջեւ երկխոսության զարգացման մեջ,- նշել է կազմակերպության գլխավոր տնօրեն Կոյիչիրո Մացուուրան՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Փարիզի կենտրոնակայանում կայացած հանդիսավոր արարողության ժամանակ նրան հանձնելով դատվավոր կոչումը հաստատող դիպլոմ: -Մենք բարձր ենք գնահատում Ռուսաստանի գործարար շրջանների արժանավոր ներկայացուցչի գործունեությունը բժշկության եւ սպիդի դեմ պայքարի ոլորտում նախագծերի իրականացման ուղղությամբ: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից միջազգային քաղաքացիական հանրակցության ներկայացուցիչների համար սահմանված այդ ամենաբարձր դատվավոր կարգավիճակում Արա Աբրահամյանին գործունեության կոնկրետ ոլորտ է վստահված: Դա քաղաքակրթությունների միջեւ երկխոսության զարգացումն է, որի պրոբլեմատիկան ներկայումս ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր գերակայություններից մեկն է»:

ՅՈՒՆԵՍԿՕ-ում Արա Աբրահամյանին համարում են այդ ուղղությամբ Ռուսաստանի քաղաքացիական հասարակության ներսում կազմակերպության առավել գործուն օգնականներից մեկը, նշել է Կոյիչիրո Մացուուրան եւ ավելացրել, որ նրան Բարի կամքի դեսպան հռչակելը հասարակական ոլորտում բազմաթիվ կարեւոր նախագծերի իրականացման գործում այդ հայտնի հասարակական գործչի ներդրած մեծ ավանդի ճանաչման նշան է: Տես էջ 2

Սանկտ Պետերբուրգում ձերբակալված Սուրեն Պետրոսյանը առնչություն չունի հոկտեմբերի 27-ի գործին

ԵՐԵՎԱՆ, 16 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Սանկտ Պետերբուրգում ձերբակալված Սուրեն Պետրոսյանը որեւէ առնչություն չունի հոկտեմբերի 27-ի գործին: Այս մասին հուլիսի 16-ին դատարանում հայտարարեց ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության պետ Արսակ Վարդազարյանը, այս մասով հերքելով ռուսաստանյան լրատվամիջոցների տարածած տեղեկատվությունը: Ա. Վարդազարյանը հայտնեց, որ 1956 թ. ծնված Պետրոսյանը կողոպուտ կատարելու կասկածանքով հետախուզվում էր 1994թ.-ից Երեւանի Շենգավիթի ոստիկանության բաժնի կողմից:

Պուտինը այնուամենայնիվ կժամանի Բաքու

ԲԱՔՈՒ, 16 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հուլիսի երրորդ տասնօրյակին Բաքու կայցելի Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը, երեքշաբթի «Թուրան» գործակալությանը հայտնել է Ադրբեջանում Ռուսաստանի դեսպան Նիկոլայ Ռյաբովը: Ըստ նրա, Պուտինը ոչ պատշգամյան այցի ընթացքում Ալիեւին կհանձնի Անդրեյ Պերվոզվանանի շքանշան, տեղի կունենա նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկում: Մասնավորապես, սպասվում է տարածաշրջանային անվտանգության եւ դարաբաղյան կարգավորման խնդիրների քննարկում, ասել է դեսպանը:

ԱՄՆ-ը հետեւում է Ադրբեջանի նախագահական ընտրությունների զարգացումներին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 16 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ Պետդեպարտամենտի խոսնակ Ռիչարդ Բաուչերը, անդրադառնալով Ադրբեջանի նախագահական ընտրությունների նախապատրաստման ընթացքին, հայտարարել է. «Մեզ մտահոգում է ընտրությունների խնդիրը, մենք որեւէ մեկին չենք պատշգամում, կարեւորն այն է, որ ընտրությունները համապատասխանեն ընտրական օրենսգրքին, Ադրբեջանի սահմանադրությանը: Մենք հուսով ենք, որ գրանցումը եւ ընտրությունները տեղի կունենան Ադրբեջանի օրենքի եւ ԵԱՀԿ չափանիշների համաձայն: Սա ենթադրում է թեկնածուների օրինական գրանցում, բանավեճի կազմակերպում եւ մամուլից հավասար օգտվելու հնարավորություն, արդար, ազատ ընտրությունների անցկացում»:

Գյուլը կայցելի Վաշինգտոն

ԱՆԿԱՐԱ, 16 ՅՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ենթադրվում է, որ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Աբդուլա Գյուլը հուլիսի 22-ին պատշգամական այց կկատարի Վաշինգտոն: Ըստ թուրքական «Զամանի», ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելի հրավերով կատարվող այցի շրջանակում Գյուլը հանդիպումներ կունենա ամերիկյան բարձրաստիճան իրավասուների հետ:

Նիկոլայ Ռյաբով. Հրադադարի խախտումը անհանգստացնում է Ռուսաստանին

ԲԱՔՈՒ, 16 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Հրադադարի պարբերական խախտումները չեն կարող չմտահոգել մեզ, քանի որ տեսականորեն ամեն ինչ սկսվում է առաջին կրակոցից: Այդ պատճառով չի կարելի բացառել այդ փոխհրաձգությունների անցումը լայնամասշտաբ ռազմական գործողությունների: Սակայն մենք հավատում ենք, որ կողմերը դա թույլ չեն տա», նշել է Ադրբեջանում Ռուսաստանի դեսպան Նիկոլայ Ռյաբովը: Նրա կարծիքով, սահմանային միջադեպերը կարող են հանգեցնել նրան, որ իրադարձությունները վերահսկողությունից դուրս գան: Անդրադառնալով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջան ժամանելու ծգծգմանը, դեսպանն ասել է, որ դրա պատճառը նրանց Պրահայի հանդիպման հետաձգումն է, որը, ինչպես հիշեցնում է Բաքվի «525» թերթը, կանխավ ծրագրվում էր այս ամիս, սակայն չկայացավ: Ն. Ռյաբովը ասել է, որ համանախագահները տարածաշրջան կայցելեն Պրահայի հանդիպումից հետո: Նրա կարծիքով, Ադրբեջանում նախագահական ընտրությունների նախաշեմին ՄԽ-ն պետք է գործի ծայրաստիճան զգուշորեն, որպեսզի թույլ չտա միջամտություն ընտրությունների գործընթացին: Մեկնաբանելով Կասպից ծովում Ռուսաստանի եւ Ադրբեջանի կողմից մեկը մյուսի նավերի կալանման հետ կապված վերջին միջադեպերը երկու երկրների փոխհարաբերությունների համատեքստում, դիվանագետն ասել է, որ այդ միջադեպերի հաջորդականությունը զուտ պատահականություն է. «Այդ ծերբակալությունները կապված չեն մեկը մյուսի հետ: Ռուսական եւ ադրբեջանական նավերը կալանվել են միանգամայն տարբեր շարժառիթներով, եւ կոնկրետ փաստերով են որոշումներ ընդունվել»: Դեսպանը նման բաներ համարել է նորմալ հարեւան երկրների միջեւ եւ ավելացրել, որ օրինախախտները պետք է պատասխան տան դրա համար, սակայն այդպիսի դեպքերը չպետք է վնաս հասցնեն միջպետական հարաբերություններին:

Վրաստանի խորհրդարանը կողմ արտահայտվեց Աբխազիայում ուժի գործադրման տարբերակին

ԹԱԹՈՒ ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

Վրաստանի խորհրդարանը չորեքշաբթի օրն արտակարգ նիստում ձայների ճնշող մեծամասնությամբ կողմ արտահայտվեց աբխազական հակամարտությունը ուժի գործադրման ճանապարհով կարգավորելու տարբերակին:

Հուլիսի 15-16-ը Սուխումում ավարտվեց վրաց-աբխազական հակամարտության կարգավորման բանակցությունների հերթական փուլը, որն ընդհատվել էր երկու տարի առաջ:

2001 թ. աշնանը պատշգամական Թբիլիսին փորձեց Աբխազիայի դեմ օգտագործել Պանկիսի կիրճում ապաստան գտած չեչեն ահաբեկիչ Ռուսլան Գելաեւի 500 հոգանոց զինված ավազակախումբը: Կոդորի կիրճում ավազակախումբը հանդիպեց աբխազական զինված ուժերի դիմադրությանը եւ հետ շրջվեց:

Վրաստանի խորհրդարանը երեկ ընդունեց բանաձեւ, ըստ որի պատշգամական Թբիլիսին հնարավորություն է տանում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում առաջ քաշել ՄԱԿ-ի խարտիայի 7-րդ հոդվածի կիրառման հարցը:

Հուլիսի 31-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում քննարկվելու է աբխազական հակամարտության խնդիրը:

7-րդ հոդվածը ենթադրում է կանխարգելիչ կամ ուժի գործադրման գործողություններ: Միջազգային պրակտիկայում որպես 7-րդ հոդվածի կիրառման օրինակ արժե հիշատակել Կոսովոն (Հարավսլավիա):

Անշուշտ, 7-րդ հոդվածի կիրառման համար անհրաժեշտ է անցնել բարդ եւ երկարատեւ գործընթաց, եւ այսօր դժվար է հավատալ, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կողմ կարտահայտվի Աբխազիայում ուժի (զենքի) գործադրման տարբերակին:

Փաստորեն, Վրաստանի խորհրդարանն ընդառաջ գնաց մոտ մեկ շաբաթ առաջ հացադուլ հայտարարած վրացի փախստականների պահանջին եւ ընդունեց մի բանաձեւ, որն առաջին հերթին պետք է դիտարկել նախընտրական տեսանկյունից: Նոյեմբերի 2-ին տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ, եւ Վրաստանի քաղաքական ուժերը հերթական անգամ հնարավորություն են ստացել շահարկելու աբխազական խաղաթղթը:

ԸՆԹԱՑԻԿ

Ինչ է «հարեւաններից» ուզում Դաշնակցությունը

Քաղաքական ցեղ, որ կոչվում է անբավարարվածություն

Քաղաքական կոալիցիայի ձեւավորման հենց սկզբից խոսվում էր, որ վերջինս երկարաձգ գոյություն պահպանել չի կարող: Դրա համար անհրաժեշտ բոլոր նախադրյալները առկա էին: Սակայն ոչ ոք չէր կարող պատկերացնել, որ կոալիցիոն ուժերի մեջ ցեցն այդքան շուտ կընկնի: Ընդ որում հետաքրքրականն այն է, որ առաջացող հակասությունները դրսեւորվում են ոչ թե կուլիսներում, որից հետո միայն դրանք շոշափվում էին հանրության կողմից, այլ միանգամից, հենց բոլորի աչքի առաջ:

Այն, որ ՀՅԴ-ն կոալիցիայի ամենախազա Վահան Հովհաննիսյանը, թերեւս փորձելով հավասարակշռել նժարները ՀՀԿ-ի եւ «Օրինաց երկրի» միջեւ, վերջերս իր ասուլիսի ընթացքում նկատի առնելով վերջին սպանությունները, ուղղակի հայտարարեց, թե իրավապահ մարմինները թերանում են իրենց աշխատանքներում: Դրանով հարվածի ուղղությունը որոշակիորեն տեղափոխվեց դեպի հանրապետականները եւ հանրապետության նախագահը, որին փաստացի անմիջականորեն է ենթարկվում երկրի ուժային համակարգը:

Բնականաբար այս անակնկալ պահպանել որակական մեծամասնությունը խորհրդարանում, իսկ ընդդիմության շարքերը այս պահին վերադառնալով նա շատ փիչ բանով կարող է ավելացնել վերջինիս ռեսուրսները:

Ամենայն հավանականությամբ ՀՅԴ-ն կոալիցիայից դուրս գալու որեւէ նպատակ չունի: Ավելի շուտ նա կփորձի սանձել ներքին ընդդիմության ֆունկցիաները: Դրանով նա նաեւ կամուրջ կստեղծի դեպի ընդդիմությունը եւ կփորձի այդպիսով միջանկյալ դիրք գրավել: Դա հնարավորություն կտա նրան առավելագույնս օգտվել ՀՀԿ-ՕԵ հնարավոր հակասություններ առաջանալիս: Սակայն քանի որ ՕԵ-ն առաջին անգամ է ռեալ իշխանական լծակների տիրապետում, ոչ մի գնով չի ցանկանա հրաժարվել ձեռք բերածից, որին այդքան սպասում են անգամ նրա դաշնակից ուժերը: ՕԵ-ն կորդեգրի հարմարվողականության քաղաքականություն, ռեալ իշխանությունը կթողնի հանրապետականներին եւ «կվայելի» այն, ինչ արդեն ունի: Դրա առաջին քայլը ՕԵ-ն արդեն արել է: Նա ուղղակի զոհեց իր ընտրողներին տված ավանդների վերադարձման մասին խոսումը կոալիցիային, քանի որ ընդունեց կառավարության նոր ծրագիրը, որտեղ խոսք անգամ չկա ավանդների վերադարձման մասին:

Բոլոր դեպքերում ակնհայտ է դառնում, որ կոալիցիան դրանում ընդգրկված ուժերից առնվազն մեկի համար իր նպատակին չի ծառայում: Կամ, ավելի ճիշտ, այդ ուժը փորձում է հրապարակայնորեն իրավիճակն այդպիսին ցույց տալ: Դա ավելին չէ, քան դժգոհության արտահայտություն, իսկ դրանից բխող բոլոր քայլերը՝ քարոզչական թե քաղաքական, ցույց են տալիս ուժերի հարաբերակցության փոփոխություն կամ դրա համար նախապատրաստվող ենթահող:

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բաղրամյան պողոտային փոխարինող ուղիներ

Հուլիսի 17-ից Բաղրամյան պողոտայի Բաղրամյան-Պուշկին հատվածում իրականացվող վերակառուցման աշխատանքների պատճառով երեկվանից փողոցի երթեւեկությունը միակողմանի է: Այսինքն՝ տրանսպորտային միջոցները բարձրացող ուղղությամբ կշարունակեն երթեւեկել, իսկ վայրջքը կիրականացվի այլ ճանապարհներով: Միկրոավտոբուսային երթուղիների այլընտրանքային ճանապարհները երկուսն են՝ Կոմիտասի փողոցից Ազատության պողոտայով դեպի հիմնական ուղեգիծ՝ քաղաքի կենտրոն կշարժվեն թթ. 8, 26, 49, 61, 85ա եւ 100 միկրոավտոբուսները:

Մնացածները կընթանան երկրորդ ճանապարհով՝ Լենինգրադյան փողոցից «Հրազդան» մարզադաշտ, ապա քաղաքի կենտրոն՝ Մաշտոցի պողոտայով կամ Սարյան փողոցով:

«Ալգիդա» պաղպաղակը քաղցկեղածին նյութեր չի պարունակում

Հուլիսի 11-ին **«Ազգը»** տպագրել էր «Նոյյան տապան» լրատվական գործակալության լուրը Երեւանում իրացվող կաթնամթերքի որակի Սպառողների ազգային ասոցիացիայի վերջերս Երեւանում կատարած ուսումնասիրությունների մասին, թե դրանցից ոմանց որակը չի համապատասխանում ընդունված չափանիշներին:

Գործակալությունը մասնավորապես հաղորդել էր, եւ իր հերթին՝ **«Ազգը»**, որ Թուրքիայից Հայաստան ներկրվող «Ալգիդա» պաղպաղակում հայտնաբերվել են մարդու առողջության համար վտանգավոր 10-ից ավելի «քաղցկեղածին» նյութեր: Սակայն, ինչպես պարզվեց միեւնույն գործակալությունից մեր ստացած հաղորդագրությունից, այդ տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ տեղի է ունեցել թյուրիմացություն. «կոնսերվանտ» (պահածոյացնող նյութեր, որոնք մարդու առողջության համար այնքան էլ վտանգավոր չեն) բառը թղթակցության հեղինակի կողմից սխալմամբ ընկալվել է «կանցերոգեն» (քաղցկեղածին նյութ):

Ճշտումներ

Հանրապետության նախագահի որդու՝ Սեդրակի հարսանյաց հանդեսի մասին երեքշաբթի օրվա համարում մեր տպագրած նյութը մեծ հետաքրքրություն է առաջացրել, բնականաբար, մեր ընթերցողների շրջանում: Մարդիկ խմբագրություն են զանգահարում հավելյալ մանրամասնություններ իմանալու: Դժբախտաբար չենք կարող բավարարել նրանց հետաքրքրասիրությունը, պարզապես նման տեղեկություններ չունենալու պատճառով:

Այնուհանդերձ, նշենք, որ նյութում տպրդել են մի քանի սխալներ, որոնք անխուսափելի են նման դեպքերում, երբ լրագրողը ներկա չի գտնվել իրադարձությանը, այլ ստիպված է եղել նյութը շարադրել ուրիշների բերած տվյալների հիմամբ:

Գրել էինք, որ հարսանյաց հանդեսին ներկա է գտնվել («հավանաբար») 400 մարդ, ինչը հստակորեն չափազանցություն է: Նմանապես նշել էինք, որ ներկա են գտնվել ընդամենը 2 հայտնի գործարարներ, այնինչ այնտեղ են եղել մեր լուրջ գործարարներից ուրիշներ եւս, որոնց հարսնատերերի մտերիմներ:

Ամենալուրջ սխալը մեր կողմից եղել է կնքահոր հարսանյաց նվերների վերաբերյալ: Հարսին ու փեսային 40 հազար դոլար արժողությամբ մատանիների մասին մեր գրածը եղել է, ըստ ներկաների վկայության, խիստ չափազանցված:

Հայցում ենք ընթերցողների ներողամտությունը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Դաֆայի հայկական եկեղեցին լքված չի եղել

Արձագանքելով մեր թերթի հուլիսի 12-ի համարում տպագրված «Հայ բժիշկները Բանգլադեշում» հոդվածի մասնավորապես «Հայ եկեղեցին եւ հայկական համայնքը մոռացության մեջ» ենթախորագրի տակ ներկայացված մանրամասներին, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հոգեւոր առաջնորդ, ինչպես նաեւ ծայրագույն Արեւելքի երկրներում հայրապետական նվիրակ Աղան արք. Բալիոզյանը հետեւյալ ծշգրտումներն է հղել խմբագրության:

ա) Դաֆայի (Բանգլադեշ) հայկական եկեղեցին կառուցվել եւ օծվել է 1781-ին:

բ) Եկեղեցու պահապան որն Մարտինն այժմ 70-ն անց է:

գ) Բանգլադեշում աղոթող հայերի քանակն ընդամենը 8-ն է եւ ոչ «800 ընտանիք»: Հայկական համայնքն այնտեղ երբեք էլ մեծ չի եղել: Հայկական դպրոց ընդհանրապես գոյություն չի ունեցել երկրում: Այդ շրջանը ժամանակին Արեւմտյան Բենգալիայի մաս է կազմել, եւ հայերը սովորաբար Կալկաթա են մեկնել տեղի հայկական խոլեջում սովորելու համար:

դ) Հայկական եկեղեցին լքված չի եղել Մայր աթոռ Սբ. Էջմիածնի կողմից: Ես անձամբ երեք անգամ եմ այցելել Դաֆա 1990-ականներին եւ հայկական եկեղեցում պատարագ մատուցել: Շարունակում եմ կապը որն Մարտինի հետ եւ տեղյակ եմ եկեղեցու անցուդարձերին:

Ցավալի է, բայց փաստ, որ Բանգլադեշի հայկական համայնքը ցրվել է: Շնորհակալ ենք որն Մարտինի նման նվիրված հայորդուն, որն անձնուրացորեն հսկում ու պահպանում է տեղի հայկական եկեղեցին:

Հայ պատմագիտական աղբյուրները Միջին Արեւելքի պատմության համար

Երուսաղեմի հրեական համալսարանի հայագիտության բաժնից էլեկտրոնային փոստով հաղորդագրություն ստացանք, որ հայագիտական ուսումնասիրությունների ծրագրով 2003-2004 թթ. հրեական համալսարանում հետազոտություններ կատարելու պատվին արժանացել է Երեւանի Մատենադարանի գիտաշխատող Արամ Թոփչյանը: Մանկավարժական համալսարանը 1983 թ. ավարտելուց հետո 2001 թ. մայիսին նա պաշտպանել է դոկտորական թեզը՝ հունական եւ լատինական աղբյուրները Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Երիտասարդ գիտնականը տիրապետում է մի քանի լեզուների՝ հին հունարեն, լատիներեն, անգլերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն: Ուսումնասիրություններ է կատարել միջազգային գիտական մի շարք ծրագրերով, տպագրել հայագիտական թեմաներով հոդվածներ:

Հրեական համալսարանի հայագիտության բաժնում նա հանդես կգա դասախոսությամբ՝ ներկայացնելով մինչ խաչակրաց արշավանքն ընկած ժամանակաշրջանի մասին հայ պատմագիտական աղբյուրները: Միջին Արեւելքի պատմության համակողմանի ուսումնասիրման տեսակետից, անշուշտ, չափազանց մեծ է թեմայի նշանակությունը, որով կարեւորվում է նաեւ հայերեն պատմագիտական հարուստ տվյալների դերը հետագա ուսումնասիրությունների համար: Հայոց պատմության հնագույն եւ միջնադարյան էջերը հայ եւ օտարազգի ուսանողներին մանրազնին ներկայացնելու իմաստով եւս որն Թոփչյանի դասախոսությունն ու գիտական աշխատանքը օգտվետ կլինի, մանավանդ որ հրեական համալսարանի գրադարանն ադամանդ է հայ ժողովրդի պատմության ու մշակույթի մասին գրքերով:

Ռ. Պ.

Արա Աբրահամյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի դեսպան

Սկիզբը՝ էջ 1

«Քաղաքակրթությունների միջեւ երկխոսության թեման գլխավորն է իմ կյանքում,-խոստովանել է Արա Աբրահամյանը: -Այդ երկխոսությունը պետք է հիմնվի հանդուրժողության վրա, որը խաղաղության եւ բոլոր ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման կարեւորագույն սկզբունքն է ու անհրաժեշտ պայմանը, ինչ ռասայի, ազգության եւ դավանանքի էլ նրանք պատկանեն: Կյանքը մեր նախնիներին սովորեցրել է, որ միայն ուրիշներին օգնելով դու կօգնես ինքդ քեզ եւ միայն այդ ճանապարհին է հնարավոր համընդհանուր փրկությունը»:

Արա Աբրահամյանը վստահ է, որ այդ բարձր կոչումը կօգնի իրեն ստեղծելու համաշխարհային հայկական կազմակերպություն: Աշխարհի 72 երկրների հայ համայնքներին միասնական ղեկավարության ներքո հավաքելու նրա մտահղացումը պետք է կենսագործվի այս տարվա հոկտեմբերին Մոսկվայում կայանալիք հայերի համաշխարհային կոնգրեսում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի նոր դեսպանը հուսով է, որ միջազգային այդ կազմակերպության բարձր հեղինակությունը կօգնի իրեն օժանդակելու ղարաբաղյան խնդրի լուծմանը: Նրա կարծիքով, Հայաստանը եւ Ադրբեջանը՝ որպես հարեւան պետություններ, կարող են եւ պետք է բոլոր վիճահարույց հարցերը լուծեն երկխոսության միջոցով:

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակն անցած շաբաթ ընդունել է Արա Աբրահամյանին՝ որպես հայտնի հասարակական գործչի ու գործարարի, որը նպաստում է ռուս-ֆրանսիական տնտեսական կապերի զարգացմանը:

Ռուսաստանի ներկայացուցիչներից ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպանի պատվավոր կոչման են արժանացել Մստիսլավ Ռոստրոպովիչը եւ Զուրաբ Ծերեթելին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Լրագրողների սենեակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Միշտ խոցելի եւ միշտ շահարկման ենթակա հայկական ավիացիան

«Արդարություն» դաշինքը երեկ ՀԺԿ գրասենյակում ճնարկում էր հրավիրել քաղավիացիայի ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ: Դժվար թե հնարավոր լինի նախաձեռնությունը հաջողված համարել, քանի որ հրավիրվածների շուրջ մասն ուղղակի չէր արձագանքել նախաձեռնությանը: Թաքուլ Մանասերյանը տեղեկացրեց, որ հրավիրված են եղել ավիացիայի ոլորտի պատասխանատու բոլոր կառույցների ներկայացուցիչներ՝ կառավարությունից, արդարադատության նախարարությունից, «Արմենիա» օդանավակայանից, քաղավիացիայի վարչությունից:

Այդուհանդերձ, ավիացիայի բնագավառի խնդիրները ճնարկվեցին, թեեւ ներկա էին մարդիկ, ովքեր կարող էին պատասխանել կոնկրետ հարցադրումների: Իսկ ճնարկումն ավելի շատ նմանվեց միակողմանի հնչեցվող բողոքների:

Բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ խոսում էին մասնագետները: Ըստ ավիասորների, նախկինում առաջատար եղած ավիացիան ներկա իրավիճակում է հայտնվել այն պատճառով, որ ոլորտում չի իրականացվել զարգացմանն ուղղված քաղաքականություն: Այն ծյուղը, որ պարզապես գերշահույթով էր աշխատելու, ծանր կացության մեջ է հայտնվում: Նպատակը պարզ է՝ սեփականաշնորհել պետական այն ձեռնարկությունները ու կառույցները, որոնք շահույթ են բերում:

Ինչո՞ւ պետությունը, եթե հնարավոր է, որ գերշահույթները սանա սեփականատերը: «Հայկական ավիաուղիների» թռիչքամեքենաշինական համալիրի ինժեներ Հայկ Պողոսյանը համոզված է, որ ստեղծված իրավիճակի նախաձեռնողը երկրի ներկայիս նախագահն է:

Նախ, 1999-ին պետտուրքի ներդրումը, որ իր բացասական ազդեցությունը թողեց, այնուհետեւ նույն թվականին A 310 ինքնաթիռի ձեռքբերումը, Ֆրանսիայի կառավարության հետ պայմանավորվածության համաձայն: Այդ ինքնաթիռը 3,5 տարի շահագործվեց, այնուհետեւ վերադարձվեց՝ պատճառելով 13 մլն դոլարի վնաս: Հայկ Պողոսյանի խոսքով, բարեբախտաբար հաջողվեց խուսափել դժբախտ պատահարներից: Ինքնաթիռն անսարքություններով էր շահագործվում: Հայկ Պողոսյանն այնուհետեւ գալիս է «Արմավիա» ընկերության՝ այս դաշտ մուտք գործելու մանրամասներին: 2001-ին «Արմավիային» հնարավորություն ընձեռվեց իրականացնելու չվերթերի մի մասը պարզ պատճառով. հեռահար նպատակներ էին դրվել, որոնք այսօր արդեն իրականություն դարձան:

Ավիացիոն տեխնիկական բազայի ախտորոշման լաբորատորիայի պետ Ալոս Բերբերյանն «Արմավիայի» թեման շարունակելով՝ նշում է, որ փաստորեն «Հայկական ավիաուղիների» ունեցվածքը սեփականաշնորհվում է ընդամենը երկու տարի առաջ շուկա մտած մի ընկերության: «Ինչպես երթուղային տախիների դեպքում է, ասում է Ալոս Բերբերյանը, այստեղ էլ ամեն ինչ արվում է հզոր ուժերի թելադրմամբ»: Մինչդեռ «Հայկական ավիաուղիները» ցանկության դեպքում հնարավոր էր չլուծարել: Ալոս Բերբերյանի խոսքով, ընկերության 30 մլն պարտքը գոյացել է վատ կառավարման պատճառով, որն, ինչպես արդեն նշվեց, նախապես պլանավորված իրավիճակ էր: Միթե՞ հնարավոր է, որ 1994 թ. թվականին 6,5 մլն դոլարի շահույթ ապահոված ընկերությունը հաջորդ տարում ախտահի 6 մլն դոլարի վնասով:

«TU 154» ինքնաթիռի ղեկավար Գարիկ Մկրտչյանը եւս այս հարցին է անդրադառնում: Նրա բերած տվյալների համաձայն, 2002 թվականին «Հայկական ավիաուղիներն» իրականում 2,5 մլն դոլարի եկամուտով է աշխատել:

Քննարկմանը ներկա էր նաեւ Ազգային ավիացիոն միության նախագահ Դմիտրի Ադբաշյանը, որը եւս ստեղծված իրավիճակի վերաբերյալ իր դժգոհությունն է հայտնում՝ մասնավորապես նշելով այն հանգամանքը, որ «Արմավիայի» տնօրենը ոչ թե մեր երկրի, այլ Ռուսաստանի քաղաքացի է:

«Հայկական ավիաուղիների» աշխատակիցները մտահոգություն են հայտնում արդեն կատարվող կրճատումներից՝ փաստելով, որ կրճատվողների թիվն անցնում է 1000-ից: Քննարկման մասնակիցները նշում էին, որ իրենց մտահոգությունն անձնական չէ:

Մինչ կլոր սեղանի սկիզբը կազմակերպիչները նշում էին, որ կառաջարկվեն նաեւ ստեղծված իրավիճակից ելքի ուղիներ: Այդուհանդերձ, կոնկրետ որեւէ անելիք չնշվեց: Խոսվեց միայն ավիասորների կողմից ԱԺ-ին եւ կառավարությանը երկու տարի առաջ ներկայացված օրենսդրական նախաձեռնություններին ընթացք տալու անհրաժեշտության մասին:

«Արդարության» պատգամավորներն իրենց հերթին խոստանում են աշնանային նստաշրջանին հետաքրքիր լինել ավիացիայի խնդիրներին:

Դժվար է պատկերացնել, որ երեկվա ճնարկման մասնակիցներին կհաջողվի ավիացիայում տեղի ունեցող գործընթացներն այլ հունով տանել: Ավելացնենք միայն, որ «Հայկական ավիաուղիների» կենսագրությունը փաստում է, որ ընկերությունը միշտ էլ ծիշտ կառավարման խնդիր է ունեցել: Սիրողական մակարդակի ղեկավարումը շատ դեպքերում հետ է մղել բիզնեսի կանոնները: Առ այսօր շատերին թվում է, որ լավ օդաչու լինելը բավարար է ընկերությունը լավ ղեկավարելու համար, այնինչ «Հայկական ավիաուղիներին» միշտ էլ պակասել է ժամանակակից բիզնեսի օրենքներով կառավարումը, որն առանցքային մասնագիտություն է եւ տաղանդ է պահանջում: Հենց այդ վատ կառավարումն է, մեր համոզմամբ, պատճառ դարձել, որ ավիացիան մեզանում վերածվել է ամեն մի միջամտության ենթակա մի կառույցի, որտեղ հաջողությամբ ներթափանցել են անհրաժեշտից 4-5 անգամ ավելի աշխատակիցներ, որոնց մեջ նաեւ մարդիկ, ովքեր շահարկելով տկարությունները՝ իրենց համապատասխան կառույցներն են ստեղծել:

Ի դեպ, աշխատանքից հեռացվողները, մեզանում ձեւավորված ավանդույթների համաձայն, նրանք կլինեն, ում աշխատանքից ազատվելն այս կամ այն չինովնիկի հետ հարաբերությունների վատացման պատճառ չի լինի:

Ինչ վերաբերում է «Արմավիային», վերջինս նույնպես օգտվել է ստեղծված կացությունից, սակայն լինելով ավելի հեռատես, ներգրավել է ռուսաստանյան մեծագույն ավիաընկերություններից մեկին՝ «Սիբիրին», որի միջոցով էլ հենց պատրաստվում են վճարել «Հայկական ավիաուղիների» տարիների ընթացքում կուտակած պարտքերը:

ՄԱՌԵՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ



«ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27»

ԱԺ-ում եղած ոստիկանների ցուցմունքները հակասում են միմյանց

Ցուցմունք տվեց նաեւ գումարտակի նախկին հրամանատարը

Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը, Սամվել Ուզունյանի նախագահությամբ, երեկ շարունակեց «Հոկտեմբերի 27»-ի գործով դատավարությունը: Նիստի սկզբում ամբաստանյալ Նաիրի Հունանյանը հայտնեց, որ որոշ նյութեր ունի հրապարակելու, ուստի դրանք ավելի հիմնավոր ներկայացնելու համար իրեն անհրաժեշտ են 2003 թ. հունվարից հուլիս ընկած հատվածում իր գործում մուտքագրված փաստաթղթերը: Ամբաստանյալ Հունանյանը նշեց նաեւ, որ իր հրապարակելիք նյութերը պետք է կցվեն քրեական գործին:

Դատավոր Սամվել Ուզունյանը պատասխանեց, որ ամբաստանյալի հայտնածի մասին կհայտնվի մեկուսարան, եւ եթե հնարավոր լինի, նրան կտրամադրվեն անհրաժեշտ նյութերը:

Այնուհետեւ Վազգեն Սարգսյանի իրավահաջորդի պաշտպան Օլեգ Յունոշեւը հանդես եկավ միջնորդությամբ: Ըստ պրն Յունոշեւի, վերջերս մեղադրական կողմին միացած մեղադրող Կորյուն Փիլոյանը դատական նիստի ժամանակ կարծիք է հայտնել, թե դատակոչված վկաների թիվը պետք է կրճատվի: Յունոշեւի կարծիքով, Փիլոյանի մտադրությունն ուղղված է դատավարության ձախողմանը, եւ նման կարծիք հայտնելով պետական մեղադրողը որոշակի մոտեցում է ձեւավորում վկաների ցուցմունքների արժանահավատության նկատմամբ: Այս հիմնավորմամբ Օլեգ Յունոշեւն իր միջնորդությամբ բացարկ հայտնեց Կորյուն Փիլոյանին:

Քննարկումից հետո դատարանը մերժեց Վազգեն Սարգսյանի իրավահաջորդի շահերի պաշտպանի միջնորդությունը՝ նշելով, որ լուրջ հիմքեր չկան:

Երեկ դատարան էր ներկայացել գործով վկա, 1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովի պահպանության ծառայության գումարտակի հրամանատար Միշա Մանուչարյանը: Ըստ Մանուչարյանի ցուցմունքի, 1999-ի հոկտեմբերի 1-ից ինքը եղել է արձակուրդում եւ հոկտեմբերի 27-ին ԱԺ է գնացել խորհրդարանի տնտեսական բաժնի օգնությամբ վառելափայտ ձեռք բերելու նպատակով: Ահաբեկչության պահից առաջ Միշա Մանուչարյանը գտնվել է Կարմիր նախասրահում, որտեղ սպասել է վաշտի հրամանատարին՝ տնտեսական մաս գնալու համար: Այդ ժամանակ էլ լսել է կրակոցներ եւ տեսել դահլիճ տանող դռնից ներս մտած ինչ-որ մեկի ոտքը: Կրակոցների ժամանակ Մանուչարյանին է մոտեցել Կարմիր նախասրահում հերթապահող ոստիկաններից Անդրանիկ Դարբինյանը եւ ասել, որ ինչ-որ մարդիկ զենքով ներս են մտել: Մանուչարյանը պատասխանել է, որ պետք է արագ իջնել ներքեւ, զենք վերցնել: Իջել են ներքեւ, որից հետո ղեկավարների թույլտվությամբ Մանուչարյանը գնացել է տուն, երկու օր անց գնդից զանգահարել են եւ կանչել աշխատանքի:

Կարմիր նախասրահում նույն օրը հերթապահած ոստիկաններ Ա. Դարբինյանն ու Ա. Թաշճյանն իրենց ցուցմունքներում դատարանում նշում էին, որ Միշա Մանուչարյանն իրենց է դիմել՝ ասելով, որ ոչինչ չասվի իր որտեղ գտնվելու մասին: Մանուչարյանը երեկվա իր ցուցմունքի ավարտին, անդրադառնալով այդ հանգամանքին, նշեց, որ ինքը նման բան չի ասել, ոչ մեկին չի խնդրել իր մասին լռել:

Պատասխանելով հարցերին Միշա Մանուչարյանն իր ցուցմունքին ավելացրեց, որ թեեւ ԱԺ տնտեսական մասը ոչ թե Կարմիր, այլ Կանաչ նախասրահի կողմում է, ինքը Կարմիր նախասրահում գտնվելիս սպասել է վաշտի հրամանատարին: Նպատակն այն էր, որ վերջինիս հետ գնա տնտեսական մաս, քանի որ այնտեղ ինքը ոչ մեկին չի ճանաչել: Ապա Մանուչարյանն ի պատասխան ասաց, որ նիստից առաջ Կարմիր նախասրահում հիշում է շատերին, այդ թվում Արմենակ Արմենակյանին եւ էլի ինչ-որ երկու հոգու, որոնց մասին չի կարող ասել, թե պատգամավորներ են եղել: Նիստը սկսվելուց հետո Մանուչարյանն ուշադիր չի եղել, թե ով կար Կարմիր նախասրահում: Կրակոցներից հետո Մանուչարյանն Արմենակ Արմենակյանին չի տեսել: Իսկ հենց կրակոցների պահին հերթապահ ոստիկաններից տեսել է Ա. Դարբինյանին, բայց չի նկատել Ա. Թաշճյանին:

Այն հարցին, թե կրակոցներից անմիջապես հետո Մանուչարյանն ինչո՞ւ է ինքն իրեն հայհոյելով իջել Կարմիր նախասրահից, վկան պատասխանեց, որ իրավիճակն էր այդպիսին:

Ավելացնենք, որ Միշա Մանուչարյանն, ըստ իր ցուցմունքի, հոկտեմբերի 27-ից հետո 2 ամիս հիվանդ է եղել: Դեպքից հետո նա հեռացվել է աշխատանքից:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռենիումը տնտեսական շահույթ չի խոստանում Հայաստանին

Մեր հրապարակմանն արձագանքել է Մաքուր երկաթի գործարանի տնօրենը

«Ազգի» հուլիսի 3-ի համարում տպագրված «Ինչպես ենք շահագործում մեր հանքավայրերը» հրապարակմանն արձագանքեց Երեւանի Մաքուր երկաթի գործարանի տնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր Գենիկ Կարապետյանը: Իբրեւ անմիջականորեն արտադրությունում զբաղված մարդ, նա այլ դիտանկյունով ներկայացրեց պղնձամոլիբդենային հանքավայրերից ռենիումի կորզման հնարավորությունները եւ հավանական վնասն ու օգուտը: «Ամենամեծ հարգանք տածելով պրոֆ. Էմմա Սաղաթելյանի նկատմամբ, այնուամենայնիվ, պիտի ասեմ, որ ռենիումի նշանակության վերաբերյալ տեղեկությունը չափազանցված է», ասում է Գ. Կարապետյանը: Ըստ տնօրենի, դա կարող է թյուր պատկերացում ստեղծել ռենիումի վերաբերյալ ճիշտ այնպես, ինչպես մի պահ ասում էին, թե «Ջերմուկը» կդարձնի Հայաստանը:

Մաքուր երկաթի գործարանը հենց ինքն է գնում Քաջարանում արտադրվող մոլիբդենի խտանյութի մոտ 40 տոկոսը: Շատ կարեւոր թվում է պարզաբանել, թե ինչքա՞ն ռենիում կա մոլիբդենի խտանյութում, դրա 1 գրամը ստանալու համար ինչքի՞սի ծախսեր են պետք, եւ տնտեսապես օգտակա՞ր է այն, թե՞ հակառակը:

Ճշմարտությունն այն է, որ Հայաստանում մոլիբդենի խտանյութը ռենիումով աղքատ խտանյութերից է: Խորհրդային տարիներին այն Չելյաբինսկի մետալուրգիական գործարանում մշակվել է առանց ռենիումի պարունակությունը հաշվի առնելու կամ դրա համար կանխավ վճարելու:

Այսօր Մաքուր երկաթի գործարանում արդեն մի քանի ամիս սկսվել է նաեւ ռենիումի արտադրությունը: Ըստ տնօրենի, ռենիումի արտադրությունը ոչ վնաս, ոչ էլ օգուտ է տալիս, պարզապես աշխատատեղեր են ստեղծվել, եւ դրա արտադրությունը նախաձեռնել են մի փիչ էլ պատվախնդրությունից ու մասնագիտական հետաքրքրությունից ելնելով: Այսօր խտանյութի գնի համեմատ դրա մեջ եղած ռենիումի քանակն արժեք չի ներկայացնում՝ 1 տոննան լավագույն դեպքում կարող է ունենալ 200 գ ռենիում: Նույնիսկ եթե ողջ Հայաստանում արտադրվող խտանյութից ռենիումն անջատվի, ընդամենը կկազմի 600-700 հազար դոլարի արժեք: Իսկ եթե ծախսերն էլ հանվեն, շահույթը չնչին տոկոս կկազմի: Միջազգային շուկայում այսօր մաքուր ռենիումի 1 գրամն արժե 1,2 դոլար, թեեւ ֆանտաստիկ թվեր են շրջանառվում՝ նույնպես ենթադրաբար, ասենք, 12 դոլար:

Մաքուր երկաթի գործարանում արտադրվող ռենիումը վաճառքի է ներկայացվելու, եւ այժմ շուկաներ փնտրելու աշխատանքներ են ընթանում: Այս մի քանի օրը նույնիսկ 10 կգ ռենիում առաքվեց Գերմանիա: Այնուամենայնիվ, տնօրենը հավաստեց, որ ռենիումի արտադրությունը դեռեւս փորձարկման փուլում է... Եթե պարզվի, որ իսկապես էական շահույթ չի ստացվի, կդադարեցնեն ժամանակ ծախսել դրա վրա:

Առիթն օգտագործելով, գործարանի տնօրենը նշեց, որ հարկ է ուշադրություն դարձնել այլ, իսկապես կարեւոր խնդրի վրա: Այսօր մոլիբդենի խտանյութի 50-60 տոկոսը Հայաստանից արտահանվում է, 40-45 տոկոսն է միայն այստեղ մշակվում: Գ. Կարապետյանի համոզմամբ, հանրապետության համար անհամեմատ շահավետ կլինի խտանյութն ամբողջությամբ մշակել Հայաստանում, այսինքն՝ ընդլայնել դրա արտադրությունը: Միայն 40-45 տոկոսի մշակումից արտադրվում է մոտ 15-17 մլն դոլարի արտադրանք, որն արագ իրացվում է:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Տները, ուր բնակվում են Կոտայքի մարզի Ակունք գյուղի նոպաստառուների ցուցակից դուրս մնացած ընտանիքները, սարսափելի նեղգործություն են ունենում նման պատկերների անսովոր աչքի վրա: Մարդու ներկայությունը այստեղ չի զգացվում. կիսավեր խրճիթներ են՝ սեւացած, քայքայված պատերով, կոտրված ու թղթապատ պատուհաններով, խունացած ծածկոցներով ժանգոտ մահճակալներով, մեկ կամ երկու կիսակոտրված աթոռակներով, որոնք կահույքի թանկարժեք մաս են կազմում: Որպես կանոն, պատերին անշուք, անարվեստ սրբապատկերներ են, որոնք հարդարանքի միակ նշանակալի բաղադրիչն են: Նույնիսկ ամառային տաք օրն այդ տներում այնքան ցուրտ է, մութ ու սառը, որ անհնար է 10 րոպեից ավելի մնալ:

Նրանք էլ հաճախ հողին է հավատարեցնում տանջանքի արդյունքները: Իսկ եթե, այնուամենայնիվ, խիզախում են հող մշակել, գարնանամուտից սկսած պարտքերի մեջ են խրվում: Ամառվա վերջին ու աշնանը՝ բերքը ուկա բերելուց հետո, նախ այդ պարտքերը պիտի փակեն: Իրենց մնում է տանջանքն ու մի կերպ վաստակած օրավուր հացը:

Նույնիսկ եթե չեն էլ մշակում հողը, հարկ, այնուամենայնիվ, պարտավոր են վճարել՝ թոշակից ու նպաստից, դառը դատած կորզեկներից կտրելով: Երեք տարի առաջ 125-ից ավելի ընտանիքներ նպաստ էին ստանում, անցած տարի՝ 60-ը: Նպաստառուների ցուցակում այս տարի բախտ է վիճակվել հայտնվելու միայն 45 ընտանիքի: Թեեւ սոցիալական հեղաբեկում չի կատարվել, բայց անապահովության չափանիշներ ծեռք բերելու համար գյուղացին պիտի հասնի մարզկենտրոն՝ չունեցած դրամը ծախսելով, հաճախ տեղում չգտնելով պատշաճ տոկոսային: 2002 թ. տեղական ինքնակառավարման նոր օրենքի համաձայն գյուղական, համայնքային խնդիրները կարգավորելու կոչված կառույցները մարզկենտրոններից ստիպողաբար պիտի տեղափոխվեն համայնքներ, բայց գործընթացն անվերջ ձգձգվում է: Մարզպետարանները չեն շտապում զիջել լիազորությունների այդ համեղ պատառը, որ եկամուտ է բերում իրենց:

Ակունքի աղքատության մյուս խորհրդանիշները

Առուշանյանների հարեւան Սարգիս Սարգսյանը կնոջ ու երեք հաշմանդամ երեխաների հետ ապրում է հողաշեն հատակով նեղլիկ ու մութ մի սենյակում, որ դժվար է բնակարան անվանել: Դժվար է պատկերացնել, թե առանց վառելիքի ինչպես են դիմացել ծմռան գրտերին: Տղան բանակից նոր է վերադարձել, մի աղջկան ամուսնացրել է ու փրկել մութ անձավից: Տարիներ հողե հատակով, անպատուհան, խոնավ սենյակում ապրելով, ինքն էլ խրոնիկական ռեւմատիզմ է վաստակել, գրեթե միշտ անկողնային վիճակում է: «Բայց բժիշկն այնքան ահավոր է», որ բուժվելու մասին չի մտածում: «Դուռը չբացած, 1000 դրամ են ուզում: Բա որ բացի, բա որ հիվանդանոց պառկի»: Ստիպված պիտի դանդաղորեն մոտենա մահվան դռանը: Ընտանիքը գոյատեւում է կից տանը 7 անձով ապրող եղբոր ու մոր օգնությամբ, որ մի կով ու տասը ոչխար ունեն: Միակ սննդատեսակը կաթ ու մածունն է: Տղան «անասունի հերթի» գնալով մի պարկ ալյուրի փող է տնտեսել, ցամաք հաց գոնե կուտենան: «Մարդիկ իրենց մեռելի վրա են լացում, մենք էլ էդ մի կտոր հացի», ասում է Սարգսի ջահել կինը:

Արշակ Ավետիսյանի ընտանիքին նպաստ մերժել են տալ, որովհետեւ տունը քարից է: Այդ քարե տունը չորս «բաժանմունք» ունի՝ վարագույրներով առանձնացված երկու ննջարաններ, նախասրահ, իսկ չորրորդ «բաժանմունքում» տան միակ հույսը՝ կովն է տեղավորվել: Թանձր գոմահոտը բռնել է տան բոլոր հագվածները: Երեք երեխա ունի, մեծ աղջիկը նոր է վերադարձել ավարտական քննությունից, գերազանց է սովորում, բայց բուհ ընդունվելու հույս չունի:

Որդը բռնել է նրանց փոքրիկ տնամերձի մրգատու ծառերը, բայց բուժելու համար միջոց չկա: Այս տարվա գրտերից ծիրանն ու դեղձն էլ չոռացել են: Մեկ տարի առաջ ընտանիքը եղել է նպաստառուների ցուցակում: Կրկին դիմել այդ ցուցակում ընդգրկվելու համար ընտանիքի հայրը մտադիր չէ: Ձանձրացել է, հոգնել նվաստացումից, երկար ճանապարհից, անիմաստ ծախսերից:

Օֆելյա Սարգսյանի ընտանիքը Ակունքի աղքատության մյուս խորհրդանիշն է: 50-ամյա կին է, բայց 70-ին մոտ է երեւում: Մի ոտքը կաթվածահար է, նույնիսկ կոշիկ չի կարողանում հագնել: Տան ծայրահեղ թշվառ տեսքին անհարիր՝ 20-ամյա տղան կարգին հագ ու կապ ունի՝ նոր կոստյում, կոշիկ ու վերնաշապիկ. գյուղի բարեարքներից մեկն է՝ Նորիկ անունով, քրիստոնեական խղճմտանք հանդես բերել: Ութ շունչ են տանը, «Փարոսում» նպաստ մերժել են տալ, որովհետեւ երեխաները չափահաս են: Ակության դեպքում իսկ սոցիալական կառույցները չեն կարող հատակ տարբերակումներ անել, քանի որ աղքատության ներկայացնողն անընդհատ հարստանում է նոր մարմասներով, իսկ ֆինանսական ու իրավական լծակները խիստ անբավարար են լուրջ հետազոտությունների համար: Շարունակաբար խոցելի են մնում եւ անընդհատ փոփոխվող չափորոշիչները եւ դրանց պահանջներին «հարմարված» գյուղացիների ներկայացրած տվյալները հող, անասուն ու մեքենա ունենալու, իրական եկամուտների վերաբերյալ:

Աղքատների սվար զանգվածի մի նվազ հատվածին խղճուկ նպաստներ շնորհելով, նույն վիճակում գտնվող մյուս հատվածին նրանից սահմանազատելով, պետությունը փաստորեն մեծ բլեֆի հեղինակ է

Սոցիալական խարանի դատապարտյալները

«Փող են ուզում, չկա, որ տամ»

Ռուբեն Առուշանյանի բնակարանի մի սենյակի հատակը խիճ ու քարեր են, փտած տախտակները հանել են, ու գետինը այդպես էլ մերկ է մնացել: Ընտանիքի միակ կերակրողը հիվանդ, թույլ տեսողությամբ կինն է. հացի մասնավոր փռում է աշխատում եւ օրական 800 դրամ վաստակելուց բացի նաեւ 400 գրամանոց 3 հաց է բերում 6 հոգանոց ընտանիքի համար: Դեռ լավ է, որ մի տղան բանակում է: 8 ամիս առաջ միջոց չունենալու պատճառով հարսը տանը ծննդաբերեց, երեխան մի ամիս առաջ է մահացել, մոր ասելով՝ սննդի պակասից: Առուշանյանի որդին՝ Վահրամը, արցախյան պատերազմի ժամանակ ծեռքը վնասել է, բայց երբեւէ չի դիմել հաշմանդամության կարգ ստանալու համար՝ կրկին վախենալով կաշառք վճարելու հեռանկարից: Ասենք նույնիսկ հաշմանդամության կարգ ունեցողներին չափորոշիչների մամլակը դուրս է մղել նպաստառուների ցուցակներից:

Չորս տարի առաջ Ռուբեն Առուշանյանի ընտանիքը եւս նպաստ էր ստանում: Դիմել է գյուղապետարան, մարզկենտրոն, ոչ մի օգուտ: Պատճառները առ այսօր չի հասկացել, եւ երկար գլուխ չի էլ դրել՝ «էնքան տեղ են ուղարկում, ոտով էդքան տեղ գնալ չի լինի», բայց եթե կինը փռից հաց չբերի, սոված կմեռնեն: Տնամերձի բերքը մինչեւ հասնելն ուտում են: Ինքն էլ հիվանդ մարդ է, Ռուսաստանում «վաստակած» հաշմանդամության երկրորդ կարգը Հայաստանում փոխվել է երրորդի, որովհետեւ պահանջված փողը չի տվել: Հարսն արդեն չորս տարի իրենց տանն է, բայց ոչ նա, ոչ էլ տղան անձնագիր չունեն, երկու տարեկան թոռն էլ ծննդական չունի՝ «փող են ուզում, չկա, որ տամ»: Նույն պատճառով ինքն ու կինն էլ անձնագրեր չունեն: Այս վերջին ամիսը, սակայն, ընտանիքի համար հույսի դուռ է բացվել: Վահրամը կնոջ հետ գործ է ճարել՝ օրավարձով գյուղի նախիրն են պահում:

Ակունքը 250 ծուխ ունի, ամեն տանը կից փոքրիկ հողակտորով, ուր բանջարեղեն, հացահատիկ ու առվույտ են ցանում: Չքավոր ընտանիքներում, որոնք, սակայն, դուրս են մնացել նպաստառուների ցուցակներից, ծայր կարիքը տարբեր արարվածներով գործողության մեջ է դրել նույն դրաման՝ գոյության կոիվ անունով: Սեփականաշնորհված հողամասեր էլ ունեն, բայց ամենը չէ, որ ի վիճակի են մշակել դրանք: Ոռոգման ջրի, վար ու ցանքի ծախսերը վեր են գյուղացու ուժերից: Հողամասերի մեծ մասը հեռու է տներից, ոչ բոլոր տարածքներն են ոռոգելի, անբարենպաստ եղանակ էլ հաճախ հողին է հավասարեցնում տանջանքի արդյունքները: Իսկ եթե, այնուամենայնիվ, խիզախում են հող մշակել, գարնանամուտից սկսած պարտքերի մեջ են խրվում: Ամառվա վերջին ու աշնանը՝ բերքը ուկա բերելուց հետո, նախ այդ պարտքերը պիտի փակեն: Իրենց մնում է տանջանքն ու մի կերպ վաստակած օրավուր հացը:

Նույնիսկ եթե չեն էլ մշակում հողը, հարկ, այնուամենայնիվ, պարտավոր են վճարել՝ թոշակից ու նպաստից, դառը դատած կորզեկներից կտրելով: Երեք տարի առաջ 125-ից ավելի ընտանիքներ նպաստ էին ստանում, անցած տարի՝ 60-ը: Նպաստառուների ցուցակում այս տարի բախտ է վիճակվել հայտնվելու միայն 45 ընտանիքի: Թեեւ սոցիալական հեղաբեկում չի կատարվել, բայց անապահովության չափանիշներ ծեռք բերելու համար գյուղացին պիտի հասնի մարզկենտրոն՝ չունեցած դրամը ծախսելով, հաճախ տեղում չգտնելով պատշաճ տոկոսային: 2002 թ. տեղական ինքնակառավարման նոր օրենքի համաձայն գյուղական, համայնքային խնդիրները կարգավորելու կոչված կառույցները մարզկենտրոններից ստիպողաբար պիտի տեղափոխվեն համայնքներ, բայց գործընթացն անվերջ ձգձգվում է: Մարզպետարանները չեն շտապում զիջել լիազորությունների այդ համեղ պատառը, որ եկամուտ է բերում իրենց:

Ակունքի աղքատության մյուս խորհրդանիշները

Առուշանյանների հարեւան Սարգիս Սարգսյանը կնոջ ու երեք հաշմանդամ երեխաների հետ ապրում է հողաշեն հատակով նեղլիկ ու մութ մի սենյակում, որ դժվար է բնակարան անվանել: Դժվար է պատկերացնել, թե առանց վառելիքի ինչպես են դիմացել ծմռան գրտերին: Տղան բանակից նոր է վերադարձել, մի աղջկան ամուսնացրել է ու փրկել մութ անձավից: Տարիներ հողե հատակով, անպատուհան, խոնավ սենյակում ապրելով, ինքն էլ խրոնիկական ռեւմատիզմ է վաստակել, գրեթե միշտ անկողնային վիճակում է: «Բայց բժիշկն այնքան ահավոր է», որ բուժվելու մասին չի մտածում: «Դուռը չբացած, 1000 դրամ են ուզում: Բա որ բացի, բա որ հիվանդանոց պառկի»: Ստիպված պիտի դանդաղորեն մոտենա մահվան դռանը: Ընտանիքը գոյատեւում է կից տանը 7 անձով ապրող եղբոր ու մոր օգնությամբ, որ մի կով ու տասը ոչխար ունեն: Միակ սննդատեսակը կաթ ու մածունն է: Տղան «անասունի հերթի» գնալով մի պարկ ալյուրի փող է տնտեսել, ցամաք հաց գոնե կուտենան: «Մարդիկ իրենց մեռելի վրա են լացում, մենք էլ էդ մի կտոր հացի», ասում է Սարգսի ջահել կինը:

Արշակ Ավետիսյանի ընտանիքին նպաստ մերժել են տալ, որովհետեւ տունը քարից է: Այդ քարե տունը չորս «բաժանմունք» ունի՝ վարագույրներով առանձնացված երկու ննջարաններ, նախասրահ, իսկ չորրորդ «բաժանմունքում» տան միակ հույսը՝ կովն է տեղավորվել: Թանձր գոմահոտը բռնել է տան բոլոր հագվածները: Երեք երեխա ունի, մեծ աղջիկը նոր է վերադարձել ավարտական քննությունից, գերազանց է սովորում, բայց բուհ ընդունվելու հույս չունի:

Որդը բռնել է նրանց փոքրիկ տնամերձի մրգատու ծառերը, բայց բուժելու համար միջոց չկա: Այս տարվա գրտերից ծիրանն ու դեղձն էլ չոռացել են: Մեկ տարի առաջ ընտանիքը եղել է նպաստառուների ցուցակում: Կրկին դիմել այդ ցուցակում ընդգրկվելու համար ընտանիքի հայրը մտադիր չէ: Ձանձրացել է, հոգնել նվաստացումից, երկար ճանապարհից, անիմաստ ծախսերից:

Օֆելյա Սարգսյանի ընտանիքը Ակունքի աղքատության մյուս խորհրդանիշն է: 50-ամյա կին է, բայց 70-ին մոտ է երեւում: Մի ոտքը կաթվածահար է, նույնիսկ կոշիկ չի կարողանում հագնել: Տան ծայրահեղ թշվառ տեսքին անհարիր՝ 20-ամյա տղան կարգին հագ ու կապ ունի՝ նոր կոստյում, կոշիկ ու վերնաշապիկ. գյուղի բարեարքներից մեկն է՝ Նորիկ անունով, քրիստոնեական խղճմտանք հանդես բերել: Ութ շունչ են տանը, «Փարոսում» նպաստ մերժել են տալ, որովհետեւ երեխաները չափահաս են: Ակության դեպքում իսկ սոցիալական կառույցները չեն կարող հատակ տարբերակումներ անել, քանի որ աղքատության ներկայացնողն անընդհատ հարստանում է նոր մարմասներով, իսկ ֆինանսական ու իրավական լծակները խիստ անբավարար են լուրջ հետազոտությունների համար: Շարունակաբար խոցելի են մնում եւ անընդհատ փոփոխվող չափորոշիչները եւ դրանց պահանջներին «հարմարված» գյուղացիների ներկայացրած տվյալները հող, անասուն ու մեքենա ունենալու, իրական եկամուտների վերաբերյալ:

Աղքատների սվար զանգվածի մի նվազ հատվածին խղճուկ նպաստներ շնորհելով, նույն վիճակում գտնվող մյուս հատվածին նրանից սահմանազատելով, պետությունը փաստորեն մեծ բլեֆի հեղինակ է դառնում՝ նեղտության նոր դուռ բանալով չքավորների առաջ: Եվ այս կարգի բոլոր միջոցառումները վերածվում են ընդամենը փարիսեցիության ու ծամածռության՝ պետական մակարդակով: Պետության այսօրինակ հոգատարությունը օրենքը խեղաթյուրելու թեւ է տալիս գյուղական ցեցերին: Ընտանիքներից մեկից մեկ տարի ութ ամսական Գեւորգ Հարությունյանին ծննդյան վկայական տալու համար 10 հազար դրամ տուգանք էին պահանջել: Որեւէ օրենքով չի սահմանվում նույնպես, որ գյուղացուն կարող են զրկել անհրաժեշտ տեղեկանքներից, եթե կենսաթոշակային ֆոնդին չի վճարել արել կամ հողի հարկը չի մուծել:

Օրվա հոգսերի ծանր բեռը դուրս է հրել գյուղացուն ժամանակից ու նրա շարժումից: Մեր այցելած ոչ մի տանը հեռուստացույց կամ ռադիո չտեսանք, թերթեր ընթերցելու հնարավորությունից էլ զրկված գյուղացին անտեղյակ է այս կարգի իր իրավունքներից: Ըստ օրենքի գյուղացին կարող է դատական կարգով բողոքարկել իրեն նպաստ նշանակող մարմնի վճիռը, եթե համաձայն չէ դրան, բայց նա ոչ գիտի այդ մասին, ոչ էլ երբեւէ կհամարձակվի նման քայլի դիմել:

Անապահովության չափորոշիչները սահմանվել են ի սկզբանե խեղաթյուրված իրականության պատկերը նկատի առնելով, հաշվի չնստելով ակնհայտ փաստերի ու հնարավոր իրողությունների հետ: Գյուղացին մեղավոր չէ, որ միջոց չունի սեփականաշնորհված հողը մշակելու համար: Բայց շարունակում են հարկ պահանջել եւ չվճարելու փաստն իբրեւ մահակ օգտագործել: Ակներեւ է նույնպես, որ դա պետության խնդիրն է՝ ճշտումներ կատարել սեփականաշնորհված (սակայն չօգտագործվող) հողերի վերաբերյալ իր օրինագծերում, որոնց անօգուտ գոյությունը ընդամենը հերթական խութն է դառնում նպաստ ստանալու ճանապարհին:

Ընտանեկան նպաստների տարիներ չարչրկվող, անվերջ փոխակերպումների ենթարկվող խնդիրը, թվում է, ավելի քան պարզ լուծում է պահանջում: Ընտանիքի անապահովության երկար, բարակ, «նրբամիտ» չափորոշիչներ սահմանելու ոչ մի կարիք չկա: Մեր իրականության տարաբնույթ, իրարամերժ իրողությունները նկատի առնելով, ընդամենը պետք է հաշվի նստել ընտանիքի ամբողջական եկամտի իրական ցուցանիշի հետ: Դա պիտի դառնա միակ եւ իսկական չափորոշիչը: Մնացածը ինքնախաբեություն է:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հետաքննող լրագրողների ընկերակցություն

Ազգային փոքրամասնություններն ավելի պաշտպանված ու գործուն են դառնում

«Հայաստանը հակասեմիտական պետություն չէ», ասում է հրեական համայնքի ղեկավարը

***Հայաստանի հրեական համայնքի ղեկավար Ռիմա Վարժապետյանը վերջերս Մ. Նահանգներում եւ Ավստրիայում մասնակցեց միջազգային հեղինակավոր համաժողովների, որոնցում համակողմանի քննարկման էին դրված ազգային փոքրամասնություններին առնչվող խնդիրները: Թե Ամերիկյան հրեական կոմիտեի համաժողովում, որ տեղի ունեցավ Վաշինգտոնում մայիսի 5-12-ին, թե հակասեմիտիզմի վերաբերյալ ԵԱՀԿ համաժողովում Վիեննա, հունիսի 19-20-ը, նա հանգամանալից անդրադարձավ Հայաստանի հրեական համայնքին հուզող խնդիրներին: Նրա ելույթները առանձնահատուկ ուշադրության են արժանացել, քանի որ Հայաստանի հրեական համայնքի կյանքը նա ներկայացրել է միանգամայն իրատեսական՝ մի կողմից ընդգծելով հրեաների հանդեպ մեր կառավարության եւ ժողովրդի բարյացակամ վերաբերմունքը, մյուս կողմից՝ տեղի ունեցած որոշ անցանկալի երեւույթները, որոնց հիմքում ընկած էին բացառապես Հայոց ցեղասպանության ճանաչմանն առնչվող դրդապատճառները:*

Տկն Վարժապետյանի ելույթներն ու հանդիպումները, բնականաբար, չվրիպեցին կառավարության ուշադրությունից: Դրանց մասին ավելի մանրամասնորեն տեղեկանալու նպատակով ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հուլիսի 7-ին ընդունեց հրեական համայնքի ղեկավարին: Նա գոհունակություն հայտնեց վերջինիս արդյունավետ գործունեության համար, քանզի միջազգային համաժողովներում նա չի սահմանափակվում միայն հրեաների իրավունքները պաշտպանելով, այլեւ հանդես է գալիս Հայաստանի զարգացման ու Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համար կարեւոր առաջարկություններով: Ստորեւ ներկայացնում ենք «Ազգի» հարցազրույցը հրեական համանքի ղեկավար Ռիմա Վարժապետյանի հետ:

Ադրբեջանի պատվիրակության ղեկավարի ելույթն ուղղակի ապշեցուցիչ էր: Նա հայտարարեց, թե իր երկրում ազգային փոքրամասնությունների իրավունքները երբեւէ չեն ոտնահարվել: Նրա խոսքերն անմիջապես ծիծաղ առաջացրին: Հավանաբար նրան թվում էր, թե բացի ադրբեջանցիներից Սումգայիթի ու Բաքվի կոտորածների մասին ոչ ոք չի լսել: Շատերի համար այդպես էլ անհասկանալի մնաց, թե նրա ելույթում ինչո՞ւ էր տեղ գտել ղարաբաղյան հակամարտության խնդիրը, ի՞նչ կապ ուներ քննարկվող թեմայի հետ: Ես, իհարկե, չկարողացա զարմանքս թաքցնել եւ հարմար պահին բանավեճի բռնվեցի նրա հետ:

Կկամենայի հատկապես առանձնացնել հանդիպումս ԵԱՀԿ-ում Հայաստանի դեսպան Ջիվան Թաքիբյանի հետ, որի անմիջական նախաձեռնությամբ էլ մասնակցեցի այդ համաժողովին: Տպավորիչ էր, որ նա մեծ հեղինակություն էր վայելում այնտեղ, աչքի ընկնում բարձր պատրաստվածությամբ ու շփման կուլտուրայով:

– Մ. Նահանգներում դուք հանդիպել եք հայկական համայնքի ներկայացուցիչների հետ, ելույթ ունեցել տեղի հայկական հեռուստաալիքով: Ի՞նչ կպատմեք այդ մասին:

– Հայերի հետ հանդիպումներում առանցքային հարցը հասկանալի է, որ Հայոց ցեղասպանության թեման էր: Այդ մասին արդեն խոսել էի իմ ելույթներում, ընդգծելով, որ Հայաստանի հրեական համայնքը ճանաչում է Հայոց ցեղասպանությունն ու գործուն մասնակցություն ցուցաբերում դրա միջազգային ճանաչման համար: Խնդիրն այն է, որ Իսրայելի պաշտոնական ներկայացուցիչները դիվանագիտական հարաբերություններում առայժմ խուսափում են ցեղասպանություն բառն օգտագործելուց, ինչն էլ, ըստ էության, պատճառ դարձավ Հայաստանում սաղրող էր Հայաստանի կառավարության ուշադիր վերաբերմունքը: Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ջերմ արձագանքը իմ գործունեությանը ապացուցում է, որ ազգային փոքրամասնությունների իրավունքները պաշտպանելու ուղղությամբ եվրոպական չափանիշներին համապատասխան քաղաքականություն վարելու սկիզբ է դրվում: Չէ՞ որ հակասեմիտիզմը ամենից առաջ ազգային փոքրամասնության իրավունքների կոպիտ ոտնահարում է: Հայաստանն, ինչ խոսք, հակասեմիտական պետություն չէ, սակայն առանձին դեպքեր տեղի ունեցան եւ, բարեբախտաբար, արագորեն կանխվեցին, ինչն էլ ինձ համարձակություն տվեց իմ ելույթներում հայտարարելու, որ հրեաներն այստեղ ապրում են բարյացակամ մթնոլորտում, առանց որեւէ տագնապի հյուրընկալում են Մ. Նահանգներից, Իսրայելից եւ այլ երկրներից ժամանող իրենց ազգակիցներին:

– Ո՞ր հանդիպումներն էին հատկապես տպավորիչ եւ արժանի հիշատակման:

– Ինձ համար ուղղակի անսպասելի էր ու մի քիչ էլ զարմանալի, որ Վաշինգտոնում կայացած չափազանց հեղինակավոր համաժողովին չէին մասնակցում Վրաստանի ու Ադրբեջանի պատվիրակությունները: Մինչդեռ այդ երկրներում կան հրեական ավելի մեծ համայնքներ, քան Հայաստանում: Իսկ Վիեննայի համաժողովին չէր ներկայացել միայն Վրաստանի պատվիրակությունը հետեւյալ պատճառաբանությամբ, թե այնտեղ գոյություն չունի հակասեմիտիզմ, դրա մասին խոսելու անհրաժեշտություն չկա: Իսկ ես հենց ելույթիս սկզբում ասացի, որ Հայաստանում էլ չկա հակասեմիտիզմ, բայց եկել եմ մասնակցելու եւ դրանով իսկ ապացուցելու, որ հայ ազգին բնորոշ չէ այդ երեւույթը:

Ռիմա Վարժապետյանը եւ Ջիվան Թաքիբյանը

հրեաների հանդեպ նախկինում եղած բացասական թույլ դրսեւորումների սրմանը:

Լոս Անջելեսում հեռարձակվող «Հորիզոն» հայկական հեռուստաալիքի հրավերով մոտ մեկ ժամ խոսեցի այս մասին: Ուղիղ հեռախոսակապի հարցերից տպավորվեցի, որ խնդիրը, կարծես, հասկանալի դարձավ շատերին:

Չմոռանամ ասել, որ «Հանդուրժողականության թանգարանում» զրուցեցի թանգարանի փոխնախագահ էլանա Սամուելսի հետ: Նա ինձ տեղեկացրեց թանգարանում Հայոց ցեղասպանության վերաբերյալ ցուցանմուշներ չունենալու պատճառով հայ համայնքի դժգոհությունների ու բողոքների մասին եւ խոստացավ ունենալու դեպքում անպայման ցուցադրել: Այդ առիթով հայ երիտասարդների բողոքի ցույցերը նա համարեց միմյանց չհասկանալու հետեւանք: Խնդրեցի նրան անել հնարավոր ամեն ինչ Մ. Նահանգների երկու մեծ համայնքների հարաբերությունները չփչացնելու համար:

Հարցազրույցը վարեց
ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ

«ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ»

«ԿԺԴՀ-ԱՄՆ պատերազմ կարող է սկսվել արդեն այս տարի»

Պնդում է Պենտագոնի նախկին ղեկավարը

Այս տեսակետն է արտահայտել ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Ուիլյամ Փերին «Վաշինգտոն փոստ» թերթին տված հարցազրույցում:

Պենտագոնի նախկին ղեկավարը մասնավորապես հայտարարել է, որ ամերիկյան իշխանությունները տեղեկություններ են ստացել ԿԺԴՀ-ում բանեցված միջուկային վառելիքի վերամշակման մասին: Փերին պնդում է, որ հյուսիսկորեացիների այդ քայլը փաստորեն պատերազմի մարտահրավեր է:

Ամերիկացի փորձագետները նշում են, որ մտահոգված են ԿԺԴՀ-ի այն հայտարարություններից, թե երկրի զինանոցում բավականաչափ պլուտոնիում կա ատոմային ռումբ պատրաստելու համար:

Փերիի կարծիքով, շատ շուտով Փենյանը կկարողանա կամ միջուկային ռումբ փորձարկել կամ էլ ահաբեկիչներին վաճառել միջուկային ռումբի արտադրության համար անհրաժեշտ նյութեր: «Դեռ կես տարի առաջ իրավիճակը հնարավոր կլիներ փրկել անհրաժեշտ միջոցների ձեռնարկման դեպքում: Կարգավորման հասկացված ժամանակը սպառվում է», ընդգծել է ազդեցիկ դեմոկրատ գործիչը:

Պենտագոնի նախկին ղեկավարն անհեռանկար է համարում ճգնաժամի կարգավորմանն ուղղված ԱՄՆ-ի, Հարավային Կորեայի, Ճապոնիայի, Չինաստանի եւ Ռուսաստանի դիվանագիտական ջանքերը: «Ես արդյունք չեմ տեսնում: Իմ կարծիքով, խնդրի լուծման դիվանագիտական ուղին անօգուտ է», ասել է Փերին:

Ինչ վերաբերում է ԿԺԴՀ ղեկավարներին, նրանք պատրաստակամություն են հայտնել մասնակցելու իրենց միջուկային ծրագրին նվիրված բազմակողմ բանակցություններին՝ Կիմ Չոն Իրի վարչակարգի պահպանման պայմանով:

Չինաստանի կառավարական աղբյուրներ վկայակոչելով «Տոկիո սիմբուն» թերթը գրում է, որ ՄԱԿ-ում ԿԺԴՀ ներկայացուցիչներն օրերս նման առաջարկով հանդես են եկել ամերիկացի դիվանագետների հետ ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ: Ավելի վաղ կորեացիները ցանկություն էին հայտնել բանակցել միայն ամերիկյան կողմի հետ:

Բյուջեի ռեկորդային պակասորդներ հայր եւ որդի Բուշերի օրոք

Մ. Նահանգների 2003 թ. բյուջեի պակասորդը կխորանա՝ հասնելով 455 մլրդ դոլար ռեկորդային մակարդակի: Այս կանխատեսումն է արվում Սպիտակ տան հրապարակած վերջին ֆինանսական փաստաթղթում: Ֆրանսպրեսս գործակալությունը նշում է, որ դրա գլխավոր պատճառներն են ԱՄՆ տնտեսական լճացումը եւ Իրաքի պատերազմը:

Ըստ կանխատեսումների, 2004 թ. բյուջեի պակասորդը հասնելու է էլ ավելի մեծ գումարի՝ 475 միլիարդի: Հաղորդվում է, որ Սպիտակ տունը ստիպված է եղել 50 տոկոսով ավելացնել բյուջեի պակասորդի վերաբերյալ փետրվարին արված կանխատեսումները, որոնցով 304 միլիարդանոց պակասորդ էր ենթադրվում սեպտեմբերի 30-ին ավարտվող 2003 ֆինանսական տարվա համար:

Սպիտակ տան փաստաթղթում նշվում է, որ առաջիկա երկու տարիներին պակասորդը կազմելու է ներքին համախառն արդյունքի 4,2 տոկոսը:

Բյուջեի նախորդ ռեկորդային պակասորդն արձանագրվել էր 1992 թ. Ջորջ Բուշ ավագի նախագահության օրոք եւ կազմել էր 290 մլրդ դոլար:

Ֆրանսպրեսն ընդգծում է, որ 455 միլիարդանոց նոր պակասորդը խորացնում է 2002 թ. ԱՄՆ տնտեսության մեջ սկսված միտումը, երբ 1997 թ.-ից հետո առաջին անգամ բյուջեում ծեղքվածք հայտնվեց՝ արտահայտվելով 159 միլիարդանոց պակասորդի տեսքով:

Միաժամանակ Սպիտակ տան բյուջետային գրասենյակը հավաստիացրել է, թե ի հայտ եկած բացասական միտումը ժամանակավոր է եւ որ մինչեւ 2006 թ. բյուջեի պակասորդը կիսով չափ կրճատվելու է:

Հաղորդվում է նաեւ, որ հունիսին ԱՄՆ գործազրկության մակարդակը կազմել է 6,4 տոկոս:

Իրաքի պատերազմի ծախսերը՝ 48 միլիարդ

ԱՄՆ պաշտպանության նախարարության հրապարակած տվյալների համաձայն, Իրաքի պատերազմն արժեցել է 48 մլրդ դոլար: Բացի դրանից, պատերազմին հաջորդած երկու ամիսներին ծախսվել է 4-ական միլիարդ:

Ամենամեծ ծախսերը կապված են եղել պատերազմի նախապատրաստության, զենքի, զորքի ու հանդերձանքի տեղափոխության հետ՝ մոտ 30 մլրդ: Բուն ռազմական գործողությունների փուլում ծախսվել է մոտ 5 միլիարդ:

Ենթադրվում է մինչեւ սեպտեմբերի 30-ը Իրաքում կայունացման գործողությունների վրա ծախսել ամսական 3,9-4 մլրդ դոլար:

Այսպիսով, մինչեւ սեպտեմբերի 30-ը՝ ընթացիկ ֆինանսական տարվա ավարտը, Իրաքի ռազմարշավի ծախսերը կկազմեն մոտ 58 մլրդ դոլար: Այս տվյալները հրապարակել է պաշտպանության փոխնախարար Դոով Զաֆեմը:

Ոոյթեր գործակալությունը նշում է, որ ներկայումս Իրաքում տեղաբաշխված են 146 հազար ամերիկացի զինվորներ: ԱՄՆ կենտրոնական հրամանատարությունը մտադիր է սեպտեմբերից հետո էլ նրանց պահել Իրաքում:

Անգլո-ամերիկյան կոալիցիոն ուժերն ապրիլի 9-ին գրավեցին Բաղդադը: Նախագահ Ջորջ Բուշը մայիսի 1-ին ազդարարեց պատերազմի ավարտը: Սակայն ամերիկացի զինվորների վրա առ այսօր պարտիզանական հարձակումներ են կատարվում:

Վաշինգտոնում դեմոկրատ սենատորները նախագահ Բուշին հանդիմանել են պատերազմական վիթխարի ծախսերի համար, մինչ բյուջեի պակասորդը հասնում է 455 միլիարդանոց ռեկորդային գումարի: Նրանք առաջարկել են Իրաքի վերակառուցման ծախսերը կիսել ուրիշ երկրների հետ: Սենատոր Մարկ Դեյթոնի խոսքերով, ԱՄՆ-ի պատմության մեջ սա «ֆինանսական վատթարագույն կառավարումն է»:

Ռուսաստանը պլուտոնիում կմատակարարի ԱՄՆ-ին

Ռուսաստանն ԱՄՆ-ին կմատակարարի ոչ ռազմական պլուտոնիում-238, որը կօգտագործվի տիեզերական ապարատներում: ՌԻԱ գործակալությունը տեղեկացնում է, որ կնքված պայմանագրի մասին ՌԴ նախագահին զեկուցել է ատոմային էներգետիկայի նախարար Ալեքսանդր Ռումյանցեւը: Նրա խոսքերով, թեեւ ատոմային էներգիայի խաղաղ օգտագործմանն առնչվող ռուս-ամերիկյան պայմանագրի ժամկետն ավարտվել է, բայց համագործակցությունը շարունակվում է:

Ռուսաստանն ամերիկյան ատոմակայանների համար առաքում է վերամշակված նախկին ռազմական ուրան: Ռումյանցեւի խոսքերով, նախատեսվում է ԱՄՆ-ի հետ պայմանագրեր կնքել նաեւ ռուսական հին ատոմային սուզանավերի օգտահանման վերաբերյալ: Նման պայմանագրեր արդեն կնքված են Ճապոնիայի, Նորվեգիայի եւ Մեծ Բրիտանիայի հետ:

Պ. Ք

Մշակույթ

Աշխատանքային այցով Փարիզ մեկնած ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ ծաղկեպսակ դրեց այս տարվա ապրիլի 24-ին Ֆրանսիայի մայրաքաղաքի «Կանադա» հրապարակում տեղադրված Դավիթ Երեւանցու հեղինակած Կոմիտասի հուշարձանին:

Տարին մեկ անգամ Հայաստան է գալիս ֆանդակագործ Դավիթ Երեւանցին (Բաբայան), որը շուրջ 30 տարի Ֆրանսիայում է ապրում: Վերջերս նա կրկին Երեւանում էր: Ամեն այցելությունը հիշեցնում, որ իրեն սնուցել է հայկական հողը: Երեւանում ապրելու տարիներին արդյունավետ է աշխատել: Մեր քաղաքում տեղադրված նրա աշխատանքները վկայում են այդ մասին: Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքը զարդարող մեծադյա ափաղաղների հեղինակն է: Նկարիչ Հմայակ Բդեյանի հետ իրականացրել են շախմատի տան ճակատային մասի ֆանդակները, ներսի որմնանկարները: 1972 թ. Դավիթ Երեւանցին տեղափոխվեց Փարիզ: Իսկ 1986 թ. բազում խոչընդոտներ հաղթահարելու գնով հայրենիքում Կարապի լճին հարող պուրակում տեղադրվեց Երեւանցու «Դարաբաղցի կինը» արձանը:

Կոմիտասի հուշարձանը Փարիզում

Շատերն էին դեմ, որ սփյուռքում ապրող ֆանդակագործի կերտած արձանը տեղադրվի հայրենիքում: Ֆրանսիայում էլ Դավիթը հավատարիմ մնաց իր մասնագիտությանը: Փարիզում ապրում է այն փողոցում, որտեղ ժամանակին ապրել է «Մարսելյեզի» հեղինակ Ռուժե դե Լիլը: Քանդակագործը պետական պատվեր ստացավ ստեղծել հուշարձան նվիրված Ֆրանսիայի հիմնին, որը պետք է տեղադրվեր դը Լիլի ապրած շենքի վրա: Այսպիսի կոմպոզիցիա ստեղծեց՝ «Մարսելյեզի» նոտաների կողքին ֆրանսիական հեղափոխության հերոսուհիներից մեկի՝ Մարիաննայի ֆանդակը:

Փարիզի հայկական եկեղեցու հինգ դռների զարդաֆանդակները ն է արել: Եվ այսպես, արվեստագետի մի շարք ֆանդակներ այսօր տեղադրված են Փարիզի փողոցներում եւ պուրակներում, որոնց թվում է Հայոց ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձանը: Խորհրդանշական ձեւով ներկայացված է ոչ միայն հայոց մեծ ողբերգությունը, այլեւ վերածնունդը, լուսաբացը: «Հիշենք, ասում է Երեւանցին, որ մեր ժողովուրդը միայն խաչքարեր չի կանգնեցրել: Նաեւ ծառ է եղել հայ ժողովրդի հավերժության խորհրդանիշը»: Այս հուշարձանը տեղադրվեց այն օրերին, երբ Ֆրանսիայի Սենատը չէր ընդունում Հայոց ցեղասպանության փաստը: Թաղապետը, սակայն, սանձնեց հուշարձանի տեղադրման պատասխանատվությունը: Թուրքիան բողոքի ձայն բարձրացրեց հուշարձանի տեղադրման առիթով... Դրանից երկու տարի անց Ֆրանսիան ընդունեց Հայոց ցեղասպանության փաստը:

Քանդակագործ Դավիթ Երեւանցին

Չեխիայի Լիդիցե քաղաքում տեղադրված է մայրությանը նվիրված նրա ֆանդակը: Երկու տարի առաջ Դավիթ Երեւանցին հաղթել է Ֆրանսիայում տեղի ունեցած ֆանդակագործների մրցույթում եւ իրավունք ստացել Կոմիտասի ֆանդակը եւս տեղադրել Փարիզում: Այն տեղադրվեց 2003 թ. ապրիլի 24-ին:

Իր այս այցելության ժամանակ Դավիթը հիշում էր արվեստագետ ընկերներին եւ հայտնի մարդկանց, որոնց հետ երբեւիցե ափվել էր: Իր էությամբ Երեւանցին չափազանց կենսասեր մարդ է, ինչը բացատրում է «հողի փիլիսոփայությանը» հավատարիմ լինելու իր հակումով: Հենց որ կավը վերցնում է ձեռքը, պարտավորվածություն է զգում «անպայման ստեղծելու մի բարոյական ստեղծագործություն», որն անմիջականորեն կապված է հողի եւ երկնքի հետ: Նրան միշտ ոգեւորել են միջնադարյան հայ մանրանկարչությունը, Մարտիրոս Սարյանի արվեստը: Վերածննդի նկարիչները եւս միշտ հետաքրքրել են իրեն: Մինասի արվեստի մեջ տեսել է ջերմություն, վերելք, Քոչարի արվեստի մեջ՝ հզորություն:

Երեւանցին պատմեց, թե ինչպես մի անգամ Ազնավուրի հետ զրուցելիս երգիչն ասել է, որ իր հաջողությունը բնատուր օժտվածության շնորհիվ չէ միայն, վճռորոշ դեր են ունեցել սեփական նախաձեռնությունները:

Երեւանցին էլ նախաձեռնող է եղել, բազում դժվարություններ հաղթահարելով հետաքրքրություն է առաջացրել իր նախագծերի նկատմամբ: Փարիզում նա ծանոթացել է Փարաջանովի հետ, նրանք հաճախ են հանդիպել, ժամանակ անցկացրել միասին: Նույնիսկ ամայության մեջ Վարդեսը մի հետաքրքիր ձեւով ներկայացված է ոչ միայն հայոց մեծ ողբերգությունը, այլեւ վերածնունդը, լուսաբացը: «Հիշենք, ասում է Երեւանցին, որ մեր ժողովուրդը միայն խաչքարեր չի կանգնեցրել: Նաեւ ծառ է եղել հայ ժողովրդի հավերժության խորհրդանիշը»: Այս հուշարձանը տեղադրվեց այն օրերին, երբ Ֆրանսիայի Սենատը չէր ընդունում Հայոց ցեղասպանության փաստը: Թաղապետը, սակայն, սանձնեց հուշարձանի տեղադրման պատասխանատվությունը: Թուրքիան բողոքի ձայն բարձրացրեց հուշարձանի տեղադրման առիթով... Դրանից երկու տարի անց Ֆրանսիան ընդունեց Հայոց ցեղասպանության փաստը:

Հուշարձանը հետեւից՝ խաչքարի, կենաց ծառի, ձեռնակապի խորհրդանիշերով

տարբերակային, յուրահատուկ բան էր տեսնում եւ կենտրոնացնում ֆանդակագործի ուշադրությունը դրա վրա: Ջերմությամբ էր խոսում Ռուբեն Մամուլյանի մասին: Հիշեց նաեւ Գրիգոր Հասրաթյանին, որը ժամանակին Երեւանի քաղաքապետն է եղել, նպաստել քաղաքի բարգավաճմանը, գնահատել արվեստը, ընդառաջել շատ արվեստագետների:

ԱՐԴԱ ԱԲՐԱԿՅԱՆ

Եղան ծառն է մեր հավերժության խորհրդանիշը

Խաչատրյանի հետքերով Ժնեւում

Նոր ցուցանմուշներ Ավ. Խաչատրյանի թանգարանի համար

Հայկական բարեգործական ընդհանուր միության ժնեւյան մասնաճյուղի (նախագահ՝ Թալին Ավագյան) նախաձեռնությամբ այստեղ կայացավ Ավ. Խաչատրյանի կենսագրության ավելի ուշ ժամանակաշրջանին նվիրված դասախոսությունների շարք: Այն ներկայացրեց բանաստեղծի թոռը՝ գրականագետ, դոկտ. Ավիկ Խաչատրյանը: Մշակութային միջոցառման երկրորդ բաժինը նվիրված էր Մարտիրոս Սարյանին, ում արվեստի մեկնությամբ հանդես եկավ նրա թոռնուհին՝ Սարյանի թանգարանի փոխտնօրեն Ռուզան Սարյանը: Շվեյցարիայում այսօր 5–6 հազարանոց հայկական համայնք կա, որ ձեւավորվել է հիմնականում Լիբանանի պատերազմի, իրանական հեղափոխության պատճառով առաջացած միգրանտների մեծ հոսքի հետեւանքով: Ունկնդիրների կեսից ավելին ավելի ուշ հայ երիտասարդություն էր, որոնք հուրախություն դասախոսությունների հեղինակների, հրաշալի խոսում ու հասկանում էին հայերեն:

Պրեւ Մարտին փողոց, թիվ 53 շենքի 3-րդ հարկում է 1915–21 թթ. ապրել մեծ բանաստեղծը: Այսօր այդ շենքը խաղաքաղաքացիներին պատկանող բնակելի է: Խաչատրյանի որդին (Վիգեն Խաչատրյանը) Շվեյցարիա մեկնելուց առաջ Ավիկ Խաչատրյանին հանձնել էր ժնեւի՝ իրենց ապրած տան, ապա նաեւ իր հաճախած հարեւան փողոցում գտնվող դպրոցի հասցեագրերը: Ժնեւի ճարտարապետները, եվրոպային հասկանալական ավանդույթով, անխաբար պահպանում են հին շենքերը, անկախ այն բանից, պատմաճարտարապետական արժեք ներկայացնո՞ւմ են, թե ոչ: Խաչատրյանի որդու վկայությամբ, հին թաղամասը նույնությամբ պահպանվել է: Նույն կերպարով, սակայն արդեն եվրոպական ոճով շեղ նորոգված էր նաեւ «Դրօշակի» խմբագրատունը, որի էջերում Խաչատրյանը «Հայ գուսան» կեղծանունով 1899–1905 թթ. տպագրել է «Հայդուկի երգեր» շարքը: Իհարկե, հայ ազատագրական պայքարի մունետիկ ու մեկնաբան, մեր պատմության ուշագրավ իրադարձությունների կենսագիր «Դրօշակի» շենքը եւս վաղուց արդեն հայերին չի պատկանում:

Այնուամենայնիվ, իբրեւ ժնեւյան միջոցառման կարեւոր արդյունք, Խաչատրյանի կենսագրության այդ կարեւոր հատվածի վերաբերյալ նոր վավերագրեր՝ թաղամասի փողոցների, Խաչատրյանի ապրած տան ու «Դրօշակի» շենքի մեծադիր լուսանկարներով, լրացնեն Ավ. Խաչատրյանի անվան թանգարանի ցուցադրանքը:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔ

Համբիկ Ճապուրյանի «Դուդուկով կոմիտասյան մեղեդիներ» խտացյալ սկավառակի շնորհանդեսը

Մոնրեալի Հայ կաթողիկե Տիրամայր Ս. Նարեկի եկեղեցում տեղի ունեցած յուրահատուկ ներկայացումը, խտացյալ սկավառակի (CD) սովորական շնորհանդես լինելուց բացի, երաժշտական-գեղարվեստական բարձրաճաշակ հայցագիր էր՝ նվիրված Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» ստեղծագործության 1000-ամյակին, գրում է կանադահայ համայնքի «Արագած» ազգային-մշակութային եւ հասարակական շաբաթաթերթը:

Համբարձում Անտոնյանի հայերենով եւ ֆրանսերենով ներկայացված հավուր պատշաճի բացման խոսքերից հետո ծանոթ երաժշտագետ Հասմիկ Ինճեճիկյանը զեկուցել է սկավառակի, Ճապուրյանի արվեստի եւ դուդուկի յուրահատկությունների մասին:

Իր հորից ժառանգելով երաժշտության նկատմամբ սերը, Համբիկը հետագայում զարգացրել է դուդուկի նվագածության արվեստը: Նա մասնակցել է միջազգային մի շարք փառատոներին: Համերգներով հանդես է եկել Միջին Արեւելքի, Եվրոպայի, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկաների երկրներում: Այդ օրը նա դուդուկի վրա նվագել է մի քանի կտոր՝ արժանանալով ներկաների գնահատանքին:

Շնորհավորական խոսքերով հանդես են եկել վերապատվելի Մեր Խաչիկյանը, Տ. Գառնիկ քահանա Գոյունյանը եւ Տ. Վազգեն քահանա Պոյաճյանը, որը նաեւ կարդացել է կանադահայոց նախկին առաջնորդ Հովնան Տերտերյանի օրհնության գիրը:

Երեկոյի վերջում եկեղեցու Աբիկյան դահլիճում կազմակերպվել է ընդունելություն, որի ընթացքում Համբիկ Ճապուրյանը ստորագրել է իր սկավառակների վրա:

Հ. Ծ.

Հայ արքեպիսկոպոս է հայտնվել Ֆրանսիայում

«Հայաստանի գահի իրական հավակնորդ արքեպիսկոպոս Սոֆի Օդուին Մամիկոնյանն իր «Կախարդանքներ» գրքում մեզ է ներկայացնում հեքիաթային մի հերոսուհու՝ հանրահայտ Հարի Փոթերի փոքրիկ քրոջը»: Ֆրանսիական «էքսպրես» շաբաթաթերթը նման առաջաբանով նյութ է ներկայացնում՝ «Նոր գրքեր» իր ավանդական խորագրի ներքո:

«Հեքիաթային հերոսուհու մասին պատմող հեղինակի կյանքը եւս նման է հեքիաթի: Միայն նրա այցեքարտն արդեն մարդուն տեղափոխում է երազային աշխարհ: Կարմիր այցեքարտի վրա՝ Հայաստանի գահի հավակնորդ արքեպիսկոպոս Սոֆի Օդուին Մամիկոնյան գրության վերեւում պատկերված է զինանշան՝ Հայաստանի արեւը, երկու առյուծ եւ նետ ու աղեղով մի արծիվ», գրում է հեղինակավոր «էքսպրեսը»: Արքեպիսկոպոս Օդուեն Մամիկոնյանը, ինչպես ինքն է իրեն անվանում, նյութում չի պարզաբանում, թե հատկապես ինչ զինանշան է սա: Փոխարենը տիկինը հետաքրքրական մանրամասներ է ներկայացնում իր ընտանիքի պատմությունից: «Իմ ընտանիքը Հայաստանի ամենահին տոհմերից է: Ու երբ վերջերս հայ միապետականները մեզ խնդրեցին դառնալ Հայաստանի գահի պատշաճավոր հավակնորդ, հոգեբարձու՝ Ֆրանսիս Վեբերը, հրաժարվեց՝ այդ իրավունքը փոխանցելով մորս եւ ինձ: Եվ ես պատրաստակամորեն ընդունեցի այդ կարգավիճակը: Անշուշտ, այլ հավակնորդներ էլ կլինեն, բայց անհրաժեշտ էր, որ ինչ-որ մեկն ի վերջո նվիրվեր այդ գործին, ինչն արեցի ես: Հետո ի՞նչ, որ երբեւէ դեռ չեմ դարձել հայաստանցի: Այստեղ տիկին Ս. Օ. Մամիկոնյանը հետաքրքրական դրվագներ է բերում նաեւ հայոց պատմությունից, ասենք, որ հայերը կաթոլիկներ են: Պատմաբաններին թերեւս կհետաքրքրի նաեւ այն հանգամանքը, որ «4-րդ դարում Մամիկոնյանները զբաղեցնում էին Հայաստանի տարածքի 1/4-րդ մասը: Ու նրանց ամրոցը Մուշի Վարագան բնակավայրում էր»:

Այնպես որ, «նման նախնիներ ունենալով, ինչպե՞ս կարելի էր չլինել երազային, լավ երեւակայությամբ մարդ», իր կենսագրության «մանրամասներից» դեռի ֆանտաստիկ ժանրի պատկանող իր ստեղծագործությանն անցում է կատարում ֆրանսիացի տիկինը:

Իսկապես, ֆանտաստիկան, աներեւակայելին թերեւս մշտական սահուն անցման մեջ է այս տիկնոջ ստեղծագործությունից դեռի նրա կյանքը: «Ես ծանծրանում էի եւ հորինեցի «Ուրիշ աշխարհ» անունով երկիրը», դարձյալ իր գրքի մասին ասում է Սոֆի Օդուին Մամիկոնյանը: Ֆրանսիացի ընթերցողը թերեւս դժվարությամբ պատկերացնի, որ տիկին Ս. Օ. Մամիկոնյանն այս մոտեցումը կիրառում է նաեւ իր կենսագրական տեղեկությունները հրամցնելիս կամ հայերի կաթոլիկության մասին պնդումներ անելիս:

Պատրաստեց
ԼԻԼԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Շարունակվում է ծնծղայի հայկական ավանդույթը

Հայերի մեջ ծնծղագործությունը տարածված է եղել վաղուց՝ տարիների ընթացքում ստեղծված ավանդույթներով: Սարգիս եւ Արման Թումուրճուի եղբայրները զբաղվում են ծնծղաների արտադրությամբ: Իրենք շարունակում են հոր գործը, որի մոտ աշակերտել եւ սովորել են արհեստի նրբությունները, տարիների ընթացքում կատարելագործվել, հմտացել: Ծնծղաներն այնպես են գրավել վարպետներին, որ թողել են ավելի վաղ սկսած ոսկերչությունը: Նրանց հայրը ծնծղագործության ասպարեզում հանրահռչակ Զիլճյան հաստատության վարպետներից մեկն էր, եւ հաստատության ԱՄՆ տեղափոխվելուց հետո մնում ու շարունակում է իր գործը Թուրքիայում:

Այժմ իր որդիները ծնծղագործությունը հասցրել են այնպիսի մակարդակի, որ արտադրանքի 99 տոկոսն արտահանվում է աշխարհի 25 երկրներ: 1994 թ.-ից մշտապես ներկա լինելով միջազգային տոնավաճառների՝ եղբայրները մեծ համբավ են ձեռք բերել աշխարհում: Տարեկան արտադրանքը կազմում է շուրջ 15-20 հազար ծնծղա, լավագույնները գնահատվում են 200-250 դոլար: Իրենց հավաստմամբ, այս ծնծղաների արտադրությունն աշխարհում եզակի է իբրեւ ձեռքի աշխատանք:

Այս մասին տեղեկացնում է «Ակօս» շաբաթաթերթը՝ թուրքական «Աքշամ» թերթից արտատպված մի հոդվածում:

Մ. Ք.

ԹԱՐՐԱԿԿԱՐՇԻ ՖԱՆՏԱՍԻԱ



«Փյունիկ»-«Ռեյկյավիկ»՝ 1-0 (0-0)

16 հուլիսի, Երեւան, «Հանրապետական» մարզադաշտ, 16 հազար հանդիսական:

Մրցավար՝ Ջոնի Վեր էկե (Բելգիա):

«Փյունիկ»-Ադուլա Բեսե, Արթուր Մկրտչյան, Մարիան Զեչու, Խոսե Բիլիբիո, Ռաֆայել Նազարյան (Նդունբուկ Բալեթ Բա, 84), Էդուարդ Պարցիկյան, Կառլ Լոմբե, Աղվան Մկրտչյան (Էդգար Մանուչարյան, 79), Խուան Պաբլո Պեռալտա, Լեւոն Փաչաջյան (Ժորա Հովհաննիսյան, 88), Միգել Անխել Սիստեռնա:

«Ռեյկյավիկ»-Քրիստիան Ֆինբոգասոն, Ռագնա Սիգուրդուս (Գարդար Յոհանսոն, 57), Քրիստին Սիգուրդսոն (Սվերիկ Բերստեյսոն, 61), Քրիստին Մագնուսոն, Էյնար Դանիելսոն (Սոլվի Դանիդսոն, 83), Գունար Էյնարսոն, Առնար Սիգուրդսոն, Ջո Սկաֆտասոն, Քրիստին Սիգուրդսոն, Յոկուլ Էլիզաբետասոն, Վեյգարդպալ Գունարսոն:

Գոլը խփեց Լեւոն Փաչաջյանը (60): 74-րդ րոպեին Ռաֆայել Նազարյանը չիրացրեց 11 մետրանոց հարվածը:

Զգուշացվեցին Զեչուն, Նազարյանը, Նդունբուկը:

Դժվարին հաղթանակ

Հանդիպման առաջին իսկ րոպեները ցույց տվեցին, որ հյուրերը բնավ էլ մտադիր չէին միայն պաշտպանվել: «Ռեյկյավիկի» ֆուտբոլիստները բավական ակտիվ սկսեցին խաղը եւ արդեն 5-րդ րոպեին Դանիելսոնը վտանգավոր հարված կատարեց «Փյունիկի» դարպասին: «Ռեյկյավիկն» ընտրել էր հակագրոհների տակտիկա. թիմը մեծ ուժերով պաշտպանվում էր, միեւնույն ժամանակ բավական ակտիվ գործում հարձակման գծում: Առաջիկ իսկ րոպեներից հյուրերի պաշտպանները խիստ հսկողության տակ էին առել փյունիկցիներին եւ գնդակը ստանալու պես անմիջապես շրջապատում էին նրանց՝ հնարավորություն չընձեռելով ազատ գործելու: Նման պայմաններում փյունիկցիները կարող էին հաջողության հասնել միայն եզրային սուր ճեղքումների շնորհիվ: Առաջին խաղակեսում նրանք գրոհները հիմնականում զարգացնում էին ձախ թեւով, որտեղ հաճախակի էր հայտնվում Աղվան Մկրտչյանը: Սակայն, ցավոք, նրա փոխանցումները տուգանային հրապարակ վտանգավոր չէին եւ հիմնականում բաժին էին հասնում մրցակցի պաշտպաններին: Միայն մեկ անգամ 34-րդ րոպեին ձախ թեւից Աղվան Մկրտչյանի տուգանային հարվածից հետո Փաչաջյանը փորձեց գլխի հարվածով խոցել դարպասը, սակայն չստացվեց: Մինչ այդ էլ Սիստեռնան տուգանային հրապարակից նպաստավոր դիրքից վրիպեց: Առաջին խաղակեսում այդպես էլ «Փյունիկին» չհաջողվեց ֆիզ թե շաս վտանգավոր պահ ստեղծել մրցակցի դարպասին, թեեւ խաղային եւ տարածքային որոշակի առավելություն ուներ:

Ընդմիջումից հետո «Փյունիկը» զգալի տեմպ հաղորդելով հարձակողական գործողություններին, լիովին տիրեց նախաձեռնությանը՝ մրցակցին ստիպելով ամբողջ թիմով նահանջել սեփական կիսադաշտ: Եթե առաջին խաղակեսում հյուրերը բավական ակտիվ էին եւ մի քանի անգամ սուր հակագրոհներ ձեռնարկեցին, ապա ընդմիջումից հետո նրանց ողջ ուշադրությունը բեւեռված էր սեփական դարպասի պաշտպանությանը: Միայն մեկ անգամ՝ 72-րդ րոպեին «Ռեյկյավիկի» ֆուտբոլիստներն օգտվելով «Փյունիկի» պաշտպանների անփույթ խաղից, 4-5 հոգով հայտնվեցին հարվածային դիրքում, սակայն վերջին պահին ռումինացի լեգեոներ Զեչուն փրկեց դրությունը՝ գնդակը հանելով անկյունային: Իսկ մնացած ժամանակահատվածում «Փյունիկն» անընդհատ դարպասը գրավելու ուղիներ էր փնտրում: Երկրորդ խաղակեսում դաշտի տերերը գրոհների ուղղությունը տեղափոխեցին աջ թեւ, որտեղ հիանալի էր գործում Կառլ Լոմբեն: Հենց նրա սլացիկ անցումից եւ հիանալի փոխանցումից հետո Փաչաջյանը դիպուկ հարվածով վերջապես բացեց հաշիվը: Իսկ մինչ այդ, նույն Փաչաջյանը կարող էր գոլի հեղինակ դառնալ, սակայն, հայտնվելով նպաստավոր դիրքում հապաղեց եւ կորցրեց գոլային հիանալի պահը: Քիչ անց Պեռալտայի հարվածը դարպասապահը հաշտով հետ մղեց:

«Փյունիկը» լավ գիտակցելով, որ նվազագույն արդյունքը չի կարող հաջորդ փուլի ուղեգիր ապահովել, շարունակում էր նույն ոգեւորությամբ եւ նպատակասլացությամբ գրոհել մրցակցի դարպասը: Եվ կրկին հիանալի խաղաց Կառլ Լոմբեն, որն, անկասկած, այս հանդիպման լավագույն խաղացողն էր: Աջ եզրով նրա հերթական անցումը հյուրերը ստիպված էին կասեցնել խաղի կանոնների խախտումով: «Փյունիկը» հաշիվը կրկնապատկելու հիանալի հնարավորություն ստացավ, սակայն, ցավոք, Ռաֆայել Նազարյանը, որը եւս վաստակավորություն չթողեց, չկարողացավ անվրեպ իրացնել 11 մետրանոց հարվածը: Դարպասապահ Ֆինբոգասոնը ակրոբատիկ ցատկով հետ մղեց գնդակը: Ընդհանրապես, հյուրերի դարպասապահն այս հանդիպման ժամանակ աչքի ընկավ վստահ խաղով: Նա հետ մղեց նաեւ Պարցիկյանի եւ Մանուչարյանի վտանգավոր հարվածները:

Այսպիսով, «Փյունիկը» գրեթե ողջ խաղի ընթացքում գրոհելով, հանդիսատեսին մրցակցի զանգվածային պաշտպանությանը, կարողացավ ընդամենը մեկ գնդակ խփել եւ դժվարին հաղթանակ տոնեց: Դժվար է ասել, թե կբավականացնի՞ արդյոք նվազագույն հաշվով տոնած հաղթանակը հաջորդ փուլ դուրս գալու համար: «Ռեյկյավիկը» Երեւանում բավական լավ տպավորություն թողեց: Թիմը հստակորեն պաշտպանվում էր, հաջող հակահարձակումներ կազմակերպում: Իր վարպետ խաղով հաստատեց աչքի ընկավ Վեյգարդպալ Գունարդսոնը: Անկասկած, Ռեյկյավիկում իսլանդացի ֆուտբոլիստները շեշտը դնելու են հարձակումների վրա եւ կարող են «Փյունիկին» դժվարին խնդիրներ առաջադրել:

Ուգրինը գլխավորեց «Ապոելը»

Կիպրոսի «Ապոելի» նոր գլխավոր մարզիչ է նշանակվել չեխ մասնագետ Դուշան Ուգրինը: Նա 2002 թ.-ից գործազուրկ էր: Նրա մարզած վերջին թիմը Շվեդիայի ԱԻԿ-ն է, որն առաջնությունում գրավել էր 5-րդ տեղը եւ մտել էր գավաթի եզրափակիչ: Նշենք, որ Դուշան Ուգրինի գլխավորությամբ Չեխիայի հավաքականը 1996 թ. եվրոպայի առաջնությունում նվաճել էր արծաթե մեդալները՝ վճռորոշ խաղում լրացուցիչ ժամանակում չեմպիոնի տիտղոսը զիջելով Գերմանիայի հավաքականին:

Ժամանելով Կիպրոս, չեխ մասնագետն անմիջապես անցել է աշխատանքի եւ անհամբերությամբ է սպասում նոր մրցաշրջանի մեկնարկին: Անցյալ մրցաշրջանում «Ապոելը», որտեղ, ի դեպ, հանդես էր գալիս ՀՀ հավաքականի ֆուտբոլիստ Ռոմիկ Խաչատրյանը, մրցաշարային աղյուսակում գրավեց միայն 3-րդ տեղը, թեեւ գրեթե ողջ առաջնության ընթացքում առջեւից էր ընթանում: Թիմն այս տարի մասնակցելու է ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարին: Նախնական փուլում «Ապոելը» կհանդիպի իսլանդական «Դերի Սիթիի» հետ:

Ռաուլը հնարավոր է տեղափոխվի «Չելսի»

«The daily Express» թերթի հաղորդման համաձայն, Մադրիդի «Ռեալը» դեմ չէ Ռաուլին տրամադրել «Չելսիին»: Արքայական ակումբը Ռաուլի համար 70 մլն ֆունտ ստեռլինգ է պահանջում: Վերջինս հրաժարվել է ակումբի հետ նոր պայմանագիր կնքել: Հնարավոր է, որ Ռաուլի համար պայքարին խառնվի նաեւ «Մանչեսթր յունայթեդը»:

Բելանովը ցանկանում է գնել «Վիլը»

Վերջին շրջանում կարծես մոդայիկ է դարձել ֆուտբոլային թիմերի բաժնետոմսերի գնումը նախկին խորհրդային Միության քաղաքացիների կողմից: Նման ցանկություն ունի նաեւ ԽՍՀՄ հավաքականի եւ Կիեւի «Դինամոյի» նախկին հարձակվող, 1986 թ. եվրոպայի լավագույն ֆուտբոլիստ Իգոր Բելանովը: Նա վճռել է գնել շվեյցարական «Վիլ» ակումբի բաժնետոմսերի 51 տոկոսը: Գործարքը կարժենա 300 հազար եվրո:

«Աուստրիայի» յուրօրինակ «հեթ տրիկը»

Ընթացիկ մրցաշրջանում «Աուստրիան» հատավ նշանակալի հաջողության: Երկրի չեմպիոնի եւ գավաթակրի կոչումը նվաճելուց հետո թիմը հաջողության հատավ նաեւ սուպերգավաթի մրցաշարում: Վճռորոշ խաղում «Աուստրիան» 2-1 հաշվով հաղթեց «Կեռնտենին»:

ԿՈՆԿԱԿԱՖ-Ի ԳԱՎԱԹ

Առաջին ուղեգիրն ԱՄՆ-ի հավաքականին

ԿՈՆԿԱԿԱՖ-ի գավաթի խաղարկությունում հայտնի դարձավ քառորդ եզրափակիչի առաջին մասնակիցը: «C» խմբում հանդես եկող ԱՄՆ-ի հավաքականը, շահելով 2-րդ հանդիպումը Մարտինիկայի ֆուտբոլիստներից, ապահովեց հաջորդ փուլի ուղեգիրը: ԱՄՆ-ի հավաքականին հաղթական պարգեւեցին Մաքբրայթի խփած 2 անպատասխան գնդակները: Նշենք, որ ԱՄՆ-ի հավաքականը հանդիսանում է «Ոսկե գավաթի» ներկայիս տերը:

«D» խմբում հանդես եկող Կուբայի ընտրանին եւս 2-0 հաշվով հաղթեց կանադացիներին, որոնք նախորդ խաղում անակնկալ էին մատուցել՝ պարտության մատնելով Կոստա Ռիկայի հավաքականին: Այդ հաղթանակի շնորհիվ կուբացիները գլխավորեցին «D» խմբի աղյուսակը:

Անհաջող մեկնարկից հետո աշխարհի չեմպիոն բրազիլացիները 2-1 հաշվով հաղթեցին Հոնդուրասի ընտրանուն: Արդեն 15-րդ րոպեին Մայկոնը բացեց հաշիվը: Խաղավարից 5 րոպե առաջ Դիեգոն 2-րդ գնդակը խփեց, իսկ վերջին րոպեին հոնդուրասցի Լեոնը 11 մ հարվածով կրճատեց հաշվի տարբերությունը: Ճամայկայի հավաքականը պարտության մատնեց գվատեմալացիներին (2-0):

Առաջատարների դիրքերն անսասան են

«Տուր դը Ֆրանս» բազմօրյա հեծանվավազքի հերթական՝ 10-րդ փուլն էական փոփոխություններ չմտցրեց առաջատարների շարքերում: 220 կմ մրցատարածությունը բոլորից արագ հաղթահարեց դանիացի հեծանվորդ Յակոբ Պիլը (5 ժամ 9 րոպե 33 վրկ): Երկրորդ տեղը զբաղեցրեց իտալացի Ֆաբիո Սակին, իսկ 3-րդ արդյունքը ցույց տվեց հոլանդացի Բրեմ դե Գրոտը: Հեծանվավազքի առաջատարի դերին մարզաբաժիկով հանդես եկող Լենս Արմստրոնգը թեեւ 45-րդ տեղում էր, սակայն դա չխանգարեց նրա դիրքերը: Ամերիկացի հեծանվորդը շարունակում է գլխավորել հեծանվավազքը: Նրան 21 վրկ-ով է զիջում ղազախստանցի Ալեքսանդր Վինոկուրովը: 3-րդ տեղում իսպանացի Իբան Մայոն է: Ընդհանուր թիմային հաշվարկով առաջ անցավ դանիական ԿՍԿ թիմը: Առաջատարին 27 վրկ-ով զիջում է իսպանական «Բանեստոն»: Իսպանական մյուս թիմը՝ «Էուսկատել Էսկադին», 3-րդ տեղում է, իսկ ահա Լենս Արմստրոնգի «Յու Էս Պոստալը» տեղափոխվեց 4-րդ հորիզոնական:

Կորեայում կրկին ֆուտբոլային տոն է

Ֆուտբոլի աշխարհի առաջնության մեկամյա տարեդարձի առթիվ Հարավային Կորեայում կազմակերպվել է ֆուտբոլի մրցաշար 5 աշխարհամասերի թիմերի մասնակցությամբ: Գլխավոր մրցանակի համար պայքարում են Հարավային Կորեայի «Իլվան», Թուրքիայի «Բեշիքթաշը», Ֆրանսիայի «Լիոնը», Հարավաֆրիկյան «Կայզեր չիֆսը», հոլանդական «Էյնդհովենը», ամերիկյան «Լոս Անջելես Գալակսին», Գերմանիայի «Մյունխեն-1860»ը, Ուրուգվայի «Նասյոնալը»: Մրցաշարի հաղթողը կստանա 2 մլն դոլար, եզրափակիչի մասնակիցը՝ 500 հազար դոլար:

Մեկնարկային խաղում «Իլվան» 2-1 հաշվով պարտության մատնեց «Բեշիքթաշին», իսկ «Լիոնի» ֆուտբոլիստներն առավելության հասան «Կայզեր չիֆսի» նկատմամբ (2-0):

Տրույեն գլխավորեց Քաթարի հավաքականը

Ֆրանսիացի մասնագետ Ֆիլիպ Տրույեն համաձայնել է գլխավորել ֆուտբոլի Քաթարի հավաքականը: Նա այդ երկրի ֆուտբոլիստների գործողությունները կղեկավարի առաջիկա 2 տարում, մինչեւ 2006 թ. աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի ավարտը: Չնայած Քաթարում պրոֆեսիոնալ ֆուտբոլը զարգացած չէ, սակայն Տրույեն մտադիր է այդ երկրում ֆուտբոլային ակտիվ գործունեություն ծավալել: Հիշեցնենք, որ ֆրանսիացի մարզիչն անցյալ տարվա աշխարհի առաջնությունում գլխավորում էր Ճապոնիայի ընտրանին, որը հաջող մրցելույթներ ունեցավ: Նա նաեւ աշխատել է Նիգերիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Բուրկինա Ֆասոյի եւ Կոտ դ'Իվուարի հավաքականների հետ:

Եզրափակիչը կկայանա Բեռլինում

Ինչպես հայտնի է, ֆուտբոլի աշխարհի հաջորդ առաջնությունը կայանալու է 2006 թ. Գերմանիայում: Առաջնության կազմկոմիտեի նախագահ, անցյալում հայտնի ֆուտբոլիստ Ֆրանց Բեկենբաուերը տեղեկացրել է, որ աշխարհի առաջնության եզրափակիչ հանդիպումը կայանալու է Բեռլինում: Հիշեցնենք, որ 1974 թ. Գերմանիայում անցկացված աշխարհի առաջնությունում վճռորոշ խաղը տեղի ունեցավ Մյունխենի օլիմպիական մարզադաշտում: Այն ժամանակ Գերմանիայի հավաքականը 2-1 հաշվով հաղթել էր հոլանդացիներին եւ նվաճել աշխարհի չեմպիոնի կոչումը: Իսկ 1988 թ. այդ նույն մարզադաշտում նախկին ԽՍՀՄ հավաքականը դարձել էր եվրոպայի չեմպիոն՝ վճռորոշ խաղում պարտության մատնելով հոլանդացիներին: 2006 թ. Մյունխենում տեղի կունենա կիսաեզրափակիչ հանդիպումներից մեկը: Մյուս խաղը նշանակված է Դորտմունդում:

Խաղը կտրասարկի կին մրցավարը

Եվրագավաթների խաղարկությունների պատմության մեջ առաջին անգամ կին մրցավարը կտրասարկի խաղը: Օգոստոսի 14-ին ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության ԱԻԿ Շվեդիա-«Ֆիլկիր» Իսպանիա հանդիպումը կվարի շվեյցարացի մրցավար Նիկոլ Պեսինան: Նա ՈՒԵՖԱ-ի մրցավարների շարքում ընդգրկվել է 1996 թ.: Մինչ այդ, Պեսինան 4 տարի վարել էր Շվեյցարիայի առաջնության եւ գավաթի հանդիպումները, ինչպես նաեւ եղել է ֆուտբոլի կանանց աշխարհի առաջնության եզրափակիչ խաղի մրցավարը:

Կլյույվերտը մնում է «Բարսելոնում»

Իսպանական «Բարսելոնի» հոլանդացի հարձակվող Պատրիկ Կլյույվերտը վերջնականապես կողմնորոշվեց: Նա մնում է «Բարսելոնում», թեեւ նոր պայմանագրով նրա, ինչպես եւ թիմակիցների աշխատավարձը զգալիորեն կրճատվում է: Այդ մասին ակումբի ղեկավարությունը նախապես տեղեկացրել է ֆուտբոլիստներին: Ճիշտ է, Կլյույվերտով հետաքրքրվում էին մի քանի թիմեր, այդ թվում անգլիական «Չելսին», սակայն ֆուտբոլիստը վճռեց շարունակել իր ելույթները կատալոնյան ակումբում:

Էջը պատրաստեց
ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

ԵՂԱՆԱԿ

Եվրոպայում անասելի շոգը փոխվել է փոթորիկների, կան մարդկային զոհեր

ՓԱՐԻԶ, 16 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այս գիշեր Ֆրանսիայի հյուսիս-արևմուտքում սաստիկ փոթորկահողմեր են մոլեգնել, որոնց արագությունը ժամում հասնում էր 160 կիլոմետրի: Դրանք ուղեկցվում էին ուժեղ ամպրոպներով եւ հորդառատ անձրեւներով: Նախնական տվյալներով, տարերքը կյանքից զրկել է չորս մարդու, այդ թվում երկու օտարերկրյա զբոսաշրջիկների, լրջորեն վիրավորվել է 9 մարդ: Շատ բնակավայրեր մնացել են առանց էլեկտրականության եւ հեռախոսակապի: Ցածրահարթ վայրերում հեղեղված են բնակելի տները: Լրջորեն խախտված է տրանսպորտային հաղորդակցությունը, փակ են մի շարք ավտոճանապարհներ, որոնք պատված են ջարդոտված ծառերի ճյուղերով: Մի քանի ժամ լիովին շրջափակված էր երկաթուղային հաղորդակցությունը, կանգ էին առել արագընթաց գնացքները:

Ներկայումս Ֆրանսիացիների համար, որոնք ազատվել էին շոգից, գլխավոր նորությունները եղանակի տեսություններն են: Երկրի արեւմտյան մասում գիշերը տեղի ունեցած փոթորկի հետեւանքները, որը շարժվում է դեպի Ֆրանսիայի հյուսիսային շրջաններ, զանգվածային արձակուրդների շրջանում ճանապարհներին գոյացած խցանումներն են գրավում հանուրի ուշադրությունը:

Վերջին օրերին ոչ միայն Ֆրանսիան, այլեւ ամբողջ Եվրոպան չէր իմանում, թե որտեղ թաքնվեր անտանելի շոգից: Օդերեւութաբանները միաձայն պնդում էին, թե նման կիզիչ արեւ չէր եղել 200 տարի: Բայց, ինչպես ցույց է տալիս փորձը, տաք մթնոլորտային ճակատին որպես կանոն փոխարինելու է գալիս սառը:

Փախուստ ինտերնետային կապի միջոցով

Անգլիայի եւ Ֆրանսիայի ոստիկաններին երեկ հաջողվեց գերմանացիների աջակցությամբ Ֆրանկֆուրտում գտնել 12-ամյա անգլուհի Շիվոն Պենինգտոնին, որն առանց ծնողների իմացության նախորդ օրը Փարիզ էր մեկնել ֆրանսիացի 31-ամյա նախկին ծովային Թոքի Ստուդեբեյկերի հետ: Նրանք որոշել էին հանդիպել ինտերնետով մոտ մեկ տարի նամակագրական կապ հաստատելուց հետո: Անգլուհին թաքցրել էր իր տարիքը եւ ներկայացել որպես 19-ամյա:

Ոստիկաններն, այդուհանդերձ, ձերբակալել են ֆրանսիացուն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինտերնետային ակումբներն օրեցօր շատանում են մեր քաղաքում եւ ավելանում է դրանցից օգտվողների թիվը, որոնց մեջ փիչ չեն նաեւ անչափահասները: Նյութին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ համարում:

Իրանում կստեղծվի ռազմական դատարան

Իրանի կառավարման անցումային խորհուրդը որոշել է դատարաններ ստեղծել Սադդամ Հուսեյնի վարչակարգի պատերազմական ոճիրները քննելու նպատակով: Դա կիրակի օրը ստեղծված խորհրդի առաջին նշանակալի որոշումն է:

Նորաստեղծ խորհրդի 25 անդամները Հուսեյնի վարչակարգի օրոք անձամբ տուժած անձինք են: Ուստի խորհրդի որոշումը պատահական համարել չի կարելի: Հուսեյնի օրոք ընդդիմադիր եղած Իրանյան ազգային կոնգրեսի մամլո քարտուղար Էնթիֆադ Կանբարը «Դեյլի թելեգրաֆ» թերթի թղթակցին պատմել է, որ «տրիբունալ է ստեղծվելու հակամարդկային ոճիրները, պատերազմական հանցագործությունները եւ ցեղասպանությունը դատապարտելու նպատակով»:

Անձամբ Սադդամ Հուսեյնը մնում է ազատության մեջ, բայց նրա գլխավոր օգնականների մեծ մասը ձերբակալված է: Նրանց թվում են Հուսեյնի անձնական քարտուղար ալ Տիկրիտին եւ նախկին վարչապետ Թարիք Ազիզը:

Սադդամ Հուսեյնի օրոք գործված թերեւս ամենամեծ ոճիրը Հյուսիսային Իրաքի քրդերի սպանություններն են: Սպանվեցին հարյուր հազարավոր քրդեր: Միայն Խալաբիա քաղաքում 1988 թ. մարտին զոհվեց 5000 մարդ:

Հակաքրդական այդ գործողությունների կազմակերպիչը Սադդամ Հուսեյնի քեռորդի Ալի Հասան ալ Մաջիդն է: Նրան հաճախ անվանում են նաեւ «քիմիական Ալի»:

Ալ Մաջիդի ճակատագիրն առայժմ անհայտ է: Անգլո-ամերիկյան կոալիցիոն ուժերը ժամանակին հայտարարել էին, թե նա զոհվել է Իրաքի հարվածի ժամանակ: Բայց հետագայում այդ հաղորդումները հերքվել էին: Եթե հաստատվի, որ ալ Մաջիդն իրոք ողջ է, եւ եթե գերի ընկնի, ապա կդառնա ռազմական դատարանի իրավասությանը ենթակա առաջին հանցագործներից մեկը:

Նոր դատարանը ստեղծելիս Իրաքի կառավարման խորհուրդը հաշվի կառնի Կամբոջայում, Ռուանդայում, Հարավսլավիայում, Սիերա Լեոնեում եւ Հարավաֆրիկյան Հանրապետությունում գործող համանման դատարանների փորձը:

Պ. Ք.

Դարձյալ «իրաքյան համախտանիշը»

ԼՈՆԴՈՆ, 16 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Պարսից ծոցի շրջանից վերադարձող բրիտանացի զինծառայողներից ոմանց մոտ նորից են դրսևորվել «իրաքյան համախտանիշի» ծագման դեպքեր: Դա անհայտ հիվանդություն է, որն արտահայտվում է ընկճվածությամբ, որթինով եւ դժվարացած շնչառությամբ: Այդ մասին հայտարարել է լորդ Մորիս օֆ Մանչեստրը Միացյալ Թագավորության խորհրդարանի Լորդերի պալատում ունեցած ելույթում, ընդգծելով, որ նմանօրինակ ախտանշաններ էին հայտնաբերվել «Փոթորիկ անապատում» ռազմարավի վետերանների շրջանում:

Լորդ Մորիս օֆ Մանչեստրը բողոք է հայտնել այն առթիվ, որ Մեծ Բրիտանիայի պաշտպանության նախարարությունը ոչ մի կերպ չի արձագանքել այն հարցադրումներին, թե որոնք են այդ հիվանդության պատճառները:

«Իրաքյան համախտանիշի» գոյությունը պաշտոնապես չի ճանաչված Մեծ Բրիտանիայում: Սակայն այն կարծիքը կա, թե այդ հիվանդությունը հարուցված է քիմիական զենքից պաշտպանվելու համար արված պատվաստումներից, որոնց բրիտանացի զինծառայողները ենթարկվել էին Պարսից ծոցի շրջան մեկնելուց առաջ:

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՐՈՒՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԹՈՐՈՍ ՍԱԿԵՐՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սիրելի հայրենակիցներ,

ինչպես գիտեք, 2003 թվականի հունիսի 7-8-ը Իտալիայի Վենետիկ քաղաքում տեղի ունեցավ ԵՀՄՖ-ի հինգերորդ տարեկան համաժողովը:

Համաժողովն օրակարգի հիմնական հարցից բացի քննարկման համար ուներ նաեւ այլ հարցեր, մասնավորապես Ֆորումի 2003-2004 թթ. գործունեության ծրագիրը, 2004 թ. Ֆորումի կանոնագրի բարեփոխումները եւ այլն:

Սակայն համաժողովի աշխատանքների երկրորդ օրը Ֆորումի քաղաքական հանձնախումբը առաջարկեց փոխել օրակարգը՝ ներկայացնելով կանոնակարգի փոփոխության առաջարկը:

Քանի որ առաջարկը նախապես համաձայնեցված չէր եւ ընդգրկված չէր համաժողովի օրակարգում, բնականաբար, մասնակիցները մերժեցին քննարկել:

Բացի այդ հարցի առաջադրումից, ժողովը ներքաշվեց անտեղի բանավեճերի մեջ եւ հնարավորություն չստեղծվեց քննարկելու օրակարգով նախատեսված մյուս հարցերը:

Համաժողովից հետո անցած ժամանակաընթացքում Ֆորումի գլխավոր քարտուղարի անունով ստացվել են մի շարք առաջարկներ, Ֆորումի անդամ միությունների արտահերթ ընդհանուր ժողով հրավիրելու համար:

Հաշվի առնելով Ֆորումի շուրջ ստեղծված թյուր կարծիքներն ու տեսակետները՝ ստացած առաջարկները, համաձայն կանոնակարգի, որոշվել է արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրել 2003 թ. սեպտեմբերի 12-13-ը Ժնեւում:

Նախատեսում ենք արտահերթ ժողովում քննարկել ստեղծված կացությունը, 2003-2004 թթ. ծրագիրը, կանոնակարգի փոփոխության նախապատրաստման եւ կազմակերպչական այլ հարցեր:

Նկատի ունենալով արտահերթ ժողովի օրակարգը՝ հրավիրվում են միայն ԵՀՄՖ-ի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հաշվի առնելով եւ վերլուծելով Ֆորումի անցած հնգամյա ուղին, կարեւորելով Ֆորումի դերը Եվրոպայի հայկական միությունների համախմբման եւ աշխատանքների խորացման անհրաժեշտությունը՝ ԵՀՄՖ-ն լի է վճռականությամբ այս ուղեւորությունը շարունակելու իր գործունեությունը՝ հօգուտ մեր հայրենակիցների խնդիրների լուծման՝ ի նպաստ Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդման եւ զարգացման:

ԵՀՄՖ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

10 հուլիսի, 2003 թ. Ժնեւ

UNIBANK

Процентные ставки по срочным депозитам ЗАО "ЮНИБАНК"

Срок вклада	Частота выплат процентов	AMD	USD		EUR	
			До 10.000	От 10.001 до 100,000	До 10.000$	От 10.001$ до 100,000$
До 28 дней	в конце срока	6	4	4,5	2,5	3
"Победа" 180 дней	в конце срока	6		9		
"Культура" 90 дней	в конце срока	9				
35-91 дня	в конце срока	8,5	7,5	7	5,5	6
	ежемесячно	8	7	6,5	5	5.5
98-182 дня	в конце срока	9	8	8,5	8.5	7
	ежемесячно	8	7	7,5	5,5	6
189-364 дня	в конце срока	10	9	9,5	7,5	8
	ежемесячно	9	8	8,5	6,5	7
371 день и более	в конце срока	11	10	10,5	8,5	9
	ежемесячно	10	9	9,5	7,5	8

Вклады превышающие 50 млн AMD или 100 тыс. USD или 100 тыс. EURO и вклады других валютах вне зависимоити от величины суммы принимаются на основе договора.

Минимальная сумма срочных депозитов
50.000 AMD
100 USD и эквивалент в валюте

Адреса отделений и филиалов ЗАО "Юнибанк"-а
Отделения в Армении:
Головной Офис:
375001 ф. Ереван, ул Амиряна 12, тел. 539870, 539871
Факс 533052, телекс. 243313 UNIAM
Филиал "Кентрон"
375001, г. Ереван, ул Абовяна 26, тел: (3741) 542430, 542431, 542432
Филиал "Комитас"
375001 г. Ереван, ул. Комитаса 1512, тел. (3741) 261838, 261858, 261868
Филиал "Ванадзор"
377222, г. Ванадзор, ул. Тигран Меци 53 тел: (37451) 40872, 40873

«Էլեկտրոնային Հայաստան» հիմնադրամը՝ Հայաստանի զարգացման ուղեցույց ինտերնետային ծրագրի շրջանակներում առաջարկում է բոլոր ՀԿ-ին, բիզնես եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններին համագործակցել՝ անվճար տեղադրելու իրենց համառոտ նկարագրերը՝ կոնտակտներ, գործունեության ոլորտ, հիմնական ծրագրեր եւ այլն) հայերեն, անգլերեն լեզուներով՝

WWW GATEWAY.am

ինտերնետային պորտալում

Համառոտ հարցաթերթիկի եւ հավելյալ մանրամասների համար խնդրում ենք դիմել մինչեւ ս/թ օգոստոսի 15-ը՝
Հեռ./ֆաքս՝ (374 1) 57 02 60
էլ.փոստ՝ Vdanielyan@gateway.am

e-Armenia foundation

ARMENIA DEVELOPMENT GATEWAY

ARMENTEL

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմենտելը» հայտարարում է մրցույթ՝ Սիարոնյան 2 մասնաշենքում հրդեհաահազանգման համակարգի մոնտաժման համար:

Այն կազմակերպությունները, որոնք ցանկանում են մասնակցել մրցույթին պետք է համապատասխան գրանցում ունենան պետական ռեգիստրում:

Մրցույթի անցկացման պայմանները շահագրգիռ կազմակերպությունները կարող են ստանալ հետեւյալ հասցեով:

«Արմենտել» ՀՁ, Սիարոնյան 2, 2-րդ հարկ, 216 սենյակ, հեռ.՝ 28.70.66

Առաջարկների ներկայացման վերջին ժամկետը՝ 2003 թ.-ի հուլիսի 28-ը, ժամը 12:00:

ՀԱՍՏԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» զբոսաշրջային ընկերությունը հրավիրում է

- Ամբերդ, աստղերի դիտում, Քարի լիճ՝ հուլիսի 12-13
- Տերյանական օրեր Ջավախքում՝ Ախալքալաքի բերդ, Թմկաբերդ, Փարվանա լիճ, Գանձա՝ հուլիսի 18-20
- Վարդավառի տոնախմբություն՝ հուլիսի 27
- Արցախ՝ Ստեփանակերտ, Շուշի, Գանձասար՝ օգոստ. 1-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԵՎ ԴԵՂԻՆ ԷՋԵՐ

Գործարար տեղեկատվություն գործարարների համար

ԲՈՅԱԿ տեղեկատվական ծառայություն

Երեւան-10, Փախստաններ Բուլվարի 1/3, 7-րդ հարկ
Հեռ. 562635, 563505, E-mail: info@spyur.am

«Գին» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 16. 7. 2003 Գինը՝ 100 դրամ